# ԿՈՒՅԲԻՇԵՎ

## ՀԱՂԱՐԾԻՆ

*Միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային նշանավոր կենտրոն Հաղարծնի վանքը գտնվում է Իջևանի շրջանի Կույբիշև գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, երկու ձորակների եզերված բարձրավանդակի կենտրոնում, անտառապատ լեռների գրկում։*

*Վանքի հիմնադրման մասին մատենագրական տեղեկություններ չկան և ստույգ հայտնի չէ, թե երբ և ով է կառուցել նրա առաջին շինությունները։ Հարևան Ն. Գետիկ վանքի վարդապետ, պատմիչ Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով Մխիթար Գոշի կառուցած Աստվածածին եկեղեցու օծման հանդիսությունները (1196) նշում է, որ դրանց մասնակցել է նաև Հաղարծնի վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնացի վարդապետը, որը, ըստ պատմիչի, շենացրել էր մինչ այդ լքված և կիսավեր վանքը։ Այստեղից ակներև է, որ Ն. Գետիկ վանքի հիմնադրումից շատ առաջ Հաղարծնի մենաստանը գոյություն ուներ, հանդիսանալով հյուսիսային Հայաստանի ականավոր օջախներից մեկը։ Սակայն Հաղարծնի համակառույցի մեջ մտնող շինությունները մեծ մասամբ* XIII *դարի գործեր են և քիչ բան են ասում հուշարձանախմբի հնագույն շենքերի մասին։ Վանքի ամենահին կառույցը՝ ս. Գրիգոր եկեղեցին վիմագիր հիշատակություններ չունի, ուստի և անորոշ է նրա կանգնման ժամանակը։ Սակայն գավթի մի վիմագրից գիտենք (սույն պրակի № 62), որ 1184թ. Վրաստանի թագավոր Գեորգիի և նրա իշխաններ Սարգիս Զաքարյանի, Ամիր Քրդի և ուրիշների* հրամանաւ *վանահայր Խաչատուրը և Սուքիասը նորոգել են եկեղեցին, մեծամեծ նվերներ ստանալով թագավորից։ Այստեղից ակներև է, որ 1184 թ. նորոգվող եկեղեցին պետք է որ կառուցված լիներ դրանից առնվազն մի քանի դար առաջ։*

*Ներկայումս Հաղարծնի համակառույցի մեջ մտնում են հետևյալ շենքերը.*

*ա.* Ս. Գրիգոր եկեղեցին *տեղավորված է հարթակի կենտրոնում, գավթի արևելյան կողմում։ Միջին մեծության (9×8,5մ) գմբեթավոր սրահ է, արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով։ Շարված է դեղնագույն սրբատաշ ծակոտկեն քարերով, ներսի պատերը կիսատաշ են։ Խաչթևերի միացման անկյուններից բարձրացող կամարները իրենց վրա են կրում սուր վեղար ունեցող ութանիստ թմբուկը։ Եկեղեցին քանիցս նորոգվել է, առաջին անգամ, ինչպես տեսանք, 1184 թվականին։*

*բ.* Գավիթը *կից է ս. Գրիգոր եկեղեցուն արևմուտքից։ Միջին դարերի հայկական մյուս գավիթների նման այս գավթի հատակաձևը ևս համարյա քառակուսի է՝ կանգնած չորս միապաղաղ սյուների և ութ որմնասյուների վրա, որոնք միանում են կամարներով ու կազմում շենքի թաղակապ ծածկը՝ կենտրոնի երդիկով։ Գավթի միակ մուտքը արևմտյան պատից է և արտաքուստ ձևավորված գլանաձև որմնասյուներով զարդարված շրջանակով։ Մուտքի շրջանակի բոլոր ձևավոր ու հարթ մակերեսները, կիսաշրջանաձև ճակատակալը ծածկված են արձանագրություններով։ Այստեղ է նաև Զաքարյան Իվանեի ընդարձակ վիմագիրը՝ Հայոց աշխարհը սելջուկներից ազատագրելու և իր հավերժացումն նոր վախճանված Զաքարիայի հիշատակի, գավիթը կառուցելու մասին։*

*գ.* Կաթողիկե եկեղեցին *գտնվում է ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմում։ Արևմտյան մուտքի ճակատակալի արձանագրության համաձայն (սույն պրակի № 104) այն կառուցել է Հարբի որդի Խալթը՝ 1194թ.։ Եկեղեցին միանավ, թաղակապ ծածկով, անգմբեթ փոքրիկ շենք է, շարված*

կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով։ Արևելյան կողմում ունի կիսակլոր փոքր աբսիդ՝ ցածր բեմով։

գ. Ս. Ստեփանոս եկեղեցին կանգնած է առանձնակի, ս. Գրիգոր եկեղեցուց արևելք, մի քանի մետր հեռու։ Կենտրոնագմբեթ, փոքր չափերի, գողտրիկ շինություն է՝ արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակաձևով, ուղղանկյուն խաչթևերով։ Շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, տանիքը պատած է ձևավոր սալաքարերով։ Հարավային պատի վրա, լուսամուտից վերև փորված է արևի գողտրիկ ժամացույց՝ Ա—ԺԲ ելնդավոր գրերով։ իսկ սրանից ներքև՝ եկեղեցու XVII դարում կատարված վերանորոգման ընդարձակ արձանագրությունը (№ 110)։ Հուշարձանի շարվածքի առանձին քարերի վրա, տարբեր դիրքերով փորագրված են Ա, Ս, Մ, Թ, Բ, Կ և այլ գլխագրեր, որոնք, հավանաբար, կառուցող վարպետների նշաններն են։

ե. Աստվածածին եկեղեցին գտնվում է հուշարձանների գլխավոր խմբից հյուսիս-արևելք, Կաթողիկե եկեղեցուց մի քանի մետր հյուսիս։ Հուշարձանը գմբեթավոր ընդարձակ գահլիճ է, արտաքուստ երկարաձգված ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով։ Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միանում են կամարներով, որոնց վրա հանգչում է կլոր թմբուկ և սրածայր վեղար ունեցող գմբեթը։ Եկեղեցու արտաքին երեսապատ քարերը կապտագույն բազալտից և դեղնագույն կրաքարից են։ Կառուցման ժամանակը և կառուցողներն անհայտ են. հարավային մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված են՝ ձախ անկյունում՝ ԻՉ Լ (1281), իսկ աջում՝ Թ՚ՆՇԻ (1071)։ Հետազոտողներից ոմանք այս բնագիրը մի ամբողջություն են համարում և այն վերծանում ԻՉԼ թվ[ին] շի[նեցաւ], այսինքն հուշարձանի կառուցումը համարում 1281 թ.։ Մյուսները պահպանված գրերը երկու տարբեր արձանագրություն են համարում և առաջարկում ձախակողմյանն ընդունել եկեղեցու նորոգման տարեթիվը (1281), իսկ աջակողմյանը՝ նրա հիմնադրման կամ շինության (1071)։ Հարցի քննությունը տալիս ենք այդ բնագրի (№ 81) ծանոթագրության մեջ։ Աստվածածին եկեղեցուն արևմուտքից կից է եղել ընդարձակ գավիթը, որից միայն արևմտյան և հյուսիսային պատերի որոշ հատվածներ են պահպանվել, մնացածը ավերված է։

զ. Սեղանատան հոյակերտ շենքը տեղավորված է հուշարձանախմբի հյուսիս-արևմտյան անկյունում։ Այս կառույցը բազմադարյան հայ ճարտարվեստի աչքի ընկնող կոթողներից է, աշխարհիկ ճարտարապետության ակնառու նվաճումը։ Սեղանատան, կամ, ինչպես նշված է արձանագրության մեջ, տրապեզի շենքը ուղղանկյուն երկարաձիգ հատակաձևով ընդարձակ սրահ է, թաղակապ, երկու երդիկ ունեցող ծածկով։ Կենտրոնի երկու կարճ սյուները և որմնասյուները միանում են խաչաձև կամարներով, որոնք իրենց վրա են պահում ընդարձակ շինության թաղակապ ծածկը, երկու խորշոր, երկթեք բացվածքով և ստալակտիտներով ձևավորված երդիկներով։ Ներսից պատերին կից ամբողջ երկարությամբ շարված են քարե սրբատաշ նստարաններ, որոնց վրա ճաշկերույթի ժամանակ նստել են վանքի միաբանները։ Սեղանատունը շարված է սրբատաշ ծակոտկեն կրաքարով, տանիքը պատած է եղել սալաքարերով։ Հարավային գլխավոր մուտքի շրջանակի արձանագրությունից իմանում ենք (սույն պրակի № 117), որ ոմն Կուտաս 1248 թ. նպաստավորել է սեղանատան շինությանը (եւոււ աւգնութիւն տրապիզգիս)։

է. Արքայական դամբարանը տեղավորված է ս. Գրիգոր եկեղեցու գավթի հարավային պատի տակ, նրան կից։ Ուղղանկյուն հատակաձևով, մատուռանման փոքրիկ շենք է եղել (2,5×1,5 մ), որի միայն հիմնապատերն են մնացել։ Ներսում երեք տապանաքարեր են՝ հարթ, կիսամշակ։ Հյուսիսային կողմի կապտագույն բազալտի տապանաքարի վրա փորագրված է՝ ՍԲՏ ԹԳ, որ վերծանվում է Սմբատ թագաւոր։ Մեջտեղի, նույնպես բազալտե տապանաքարի վրա պահպանվել են առանձին գրեր, որոնք հավաստիորեն չեն վերծանվում։ Հարավային տապանաքարը կրաքարից է, մանր բեկորների է վերածվել, տապանագիրը եղծվել, ուստի չի իմացվում, թե ում գերեզմանն է։ Հավանական է մտածել, որ այստեղ թաղված են Կյուրիկյան թագավորները։

ը. Մատուռները և խաչքարերը գտնվում են հուշարձանների գլխավոր խմբից դեպի արևելք, ժայռոտ բլրի լանջին։ Փոքրիկ մատուռներ են (4×2 մ), կառուցված վանքի մյուս շինությունների հետ միաժամանակ, կամ փոքր-ինչ ուշ։ Նրանց մոտ կանգնած գեղաքանդակ խաչքարերի արձանագրություններն ունեն 1218, 1219 թթ. (№№ 123, 124)։ Կարելի է ենթադրել, որ հենց այդ ժամանակներում էլ շինվել են մատուռները և խաչարձանները։

* * *

Հաղարծնի վանքը հարուստ է վիմական արձանագրություններով. սույն ժողովածուում տեղավորված են հուշարձանների որմերին փորագրված 103 մեծ ու փոքր վիմագրեր, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Կայենի և Մահկանաբերդի գավառների քաղաքական պատմության սոցիալ-տնտեսական իրադարձությունների, մշակույթի ու կենցաղի մասին։ Վիմագրերը մեծ մասամբ վատ են պահպանվել, դարերի ընթացքում հողմահարվել, եղծվել են և դժվարությամբ են վերծանվում։ Արձանագրությունների ընդօրինակման և հրատարակման գործը սկիզբ է առել դեռևս անցյալ դարի կեսերից։ Առաջին անգամ 1842 թ. Հաղարծնի վանքի երկու արձանագրություն է հրատարակել Հովհ. Շահխաթունյանցը։ Այնուհետև գրեթե միաժամանակ վանքի 18 բնագրեր է իր գրքում զետեղել Ս. Ջալալյանցը։ Ավելի ուշ, 1895 թ. հրատարակված իրենց տեղագրական երկերում Մ. Սմբատյանցը և Մ. Բարխուդարյանցը նույնպես ընդօրինակել են հուշարձանախմբի վիմագրերը, ըստ որում, առաջինը հրատարակել է 7, իսկ երկրորդը՝ 10 արձանագրություն։ Ընթացիկ դարի սկզբին Մ. Տեր-Մովսիսյանը «Ազգագրական հանդեսում» (1913, գիրք 25) հրատարակեց Հաղարծնի վանքի 39 արձանագրություններ, որոնք անփոփոխ տեղ են գտել նույն հեղինակի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի վանքերի մասին հետագայում գրած մենագրության մեջ (1938, Երուսաղեմ)։ Հաղարծնի վանքի վիմագրերի առավել ընդարձակ հավաքածուն պատկանում է Հ. Եղիազարյանին, որը «Էջմիածին» ամսագրի 1954 թ. երեք համարներում (IX, X, XI) հրատարակած իր հոդվածում համառոտ նկարագրելով հուշարձանախմբի կառուցվածքները, ներկայացնում է նրանց պատերին փորագրված շուրջ 70 բնագրերը, սեփական, նախորդների համեմատությամբ զգալապես հարազատ վերծանություններով, սակայն առանց հետևելու ժամանակակից արձանագրագիտության մեջ ընդունված հրապարակման կանոններին և առանց զետեղելու այդ բնագրերի մեկնությունները։

Արձանագրությունների վերոհիշյալ վերծանությունները քանի որ անհարազատ են բնագրին, քարի վրա փորագրվածին, այդ պատճառով սույն ժողովածուի համար պակաս օգտակար նշանակություն կարող են ունենալ. բոլոր տեղագրողներն իբրև ընդհանուր կանոն արտագրել և հրատարակել են միայն լավ երևացող և հեշտ ընդօրինակվող բնագրերը, եղծված դժվարընթեռնելի արձանագրությունները անտեսվել են։ Այս առումով, ավելի բարվոք են Մ. Տեր-Մովսիսյանի և Հ. Եղիազարյանի վերծանությունները, թեև նրանցում ևս քիչ չեն աղավաղումները և անհասկանալի տարընթերցումները։ Հաղարծնի վիմագրերից միայն մեկն է (սույն պրակի № 62) արժանացել պատմաբանասիրական հանգամանալի հետազոտության և գիտական հրապարակման՝ Ս. Երեմյանի և Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածներում։

Ներկա ժողովածուն Հաղարծնի վանքի վիմագրերի լիակատար հավաքածուն է և հրատարակվում է առաջին անգամ։ Վերծանությունները նոր են, ըստ ամենայնի ճշգրտված։ Նախորդ ընդօրինակողների ընթերցումները մեջ ենք բերում և քննում միայն այն դեպքերում, երբ կասկածելի ենք համարում մեր սեփական ընդօրինակությունը, կամ այն նկատառումով, որ բնագիրը անցյալ դարում ավելի անխաթար է եղել, ուստի և նրա նախկին ընթերցվածները կարող են օգնել բնագրի ավելի հավաստի վերականգնմանը։

**23. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևմտյան դռան բարավորից վերև, 11 տող.*

ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ Է ԵՒ ԱՐԺԱՆ ՄՇՏԸՆՋԵՆԱՒՈՐ
ՈՐԴԵԱՑ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ, ՅԱԶԳԷ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ՝ ԻՒԱՆԷԻ ԵՒ ԶԱՔԱՐԷԻ, ՅՈՐԺՍՄ
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆՆ ԱՅ ԷՀԱՍ ՅԱՐԱՐԱԾՍ ԵՒ ԵՏ . . . Ն ԱՐԱՌԻՆ ՏԻՐԵԼ
ՍԷՓԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՆ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ, ԵՏ Ի ՁԵՌՍ ՄԵՐ ՅՍՈՒԱԶ
ԶԱՆԱՌԻԿ ԴՂՅԱԿՆ ՍՆԲԵՐԴ, ԵՒ ԶԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՆ ԱՆԻ, ԱՊԱ ԶԱՄՈՒՐՆ
ԲՋՆԻ, ԶՄԱՐԱՆԴ, ՄԻՋՔ ԵՒ ԳԱՒԱԶԱՆՔ Ի ԹԱՒՐԷԺ, ԶԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ ՄԻՆՋԵՒ
ԽԼԱԹ, ԶՇԱՔԻ ԵՒ ԶՇՐՈՒԱՆ, ՊԱՐՏԱՒ, ՄԻՆՋԵՒ ԲԵՂՈՒԿԱՅՆ ԵՒ ԶԱՅԼ ԲԱԶՈՒՄ
ԻՒՐԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՒՔ, ԶՈՐ ԱՒԵԼՈՐԴ ՀԱՄԱՐԵՑԱՔ ՅԻՇԱՏԱԿԵԼ։ ԱՅԼԵՒ ԱՆԲԱՐ-



*Գավթի արևմտյան մուտքի արձանագրությունները*

ԽԱՆԱԼԻՆ. ԸՆԴ ՍԻՐԵՑ ԶԹԱԳՍ ՊԱՐԾԱՆԱՑ ԳԼԽՍ ԻՄՈ ԶԶԱՔԱՐԻԱ, ԵՒ ԿՈՉԵՑ ԱՌ
ԻՆՔՆ. ՅՈՐՈ|ՁԵՌՆ ԵՂ ԵՒ ԱՐԻՈՒԹԻ/ԻՆ Ս, ԵՒ ԵՍ՝ ՇԻՆԵՑԻ Ի ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՎԱՆՔՍ
ՀԱՂԱՐԾԻՆ ԺԱՄԱՏՈՒՆ ՎԻՄԱՐԴԵՆ ԿԱՄԱՐ|ԱԿԱՊ, Ի ԴՐԱՆ Ս͞Բ ԳՐԻԳՈՐԻՍ։ ԵՒ
Ռ͞ ԱՅԳԻ ՅԵՐԵՒԱՆ ԷՏՈՒ ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ| ԵՂԲԱՒՐ ԻՄՈ։ ԵՒ ՊԱՐՏԻՆ ՍՊԱՍԱՒՈՐՔ
ՍՈՐԱ ԶԱՒԱԳ ԽՈՐԱՆԻՆ| ՊԱՏԱՐԱԳՆ ԶԱՔԱՐԷԻ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ԱՆԽԱՓ|ԱՆ։ ԿԱՏԱ-
ՐԻՉՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑ|ԻՆ ՅԱՅ։

Հրատ. Շահխաթունյանց, Բ, 370, Ջալալյանց, Ա. 131—132, Սմբատյանց, 183, Բարխուդարյանց, 366, Տեր-Մովսիսյան, 77, ՎՏ, 141, Եղիազարյան, 1954, Ժ, 40։

Գիտելիք. *Բնագիրը հրատարակվել է բազմիցս, սակայն ցարդ գիտական, քննական ընդօրինակություն չունի և շատ կետերում կասկածելի է։ Շրջանակի աջ կողմի 2-րդ տողում* Միչք և Գաւազանք *տեղանունները Ջալալյանցը կարդացել է մինչև* Գաւազանք, *Տեր-Մովսիսյանը՝* միձր և Գաւազանք, *Եղիազարյանը՝* Զ. և Գաւազանք: *Շարունակության վրա* զՃաքի և զՃրուաՆ, *Ջալալյանցը տալիս է* զՃրու=Ն Ջիրևան, *Եղիազարյանը՝*...եւՁերուան: *Նույն տողում* եւ եա...ն.. արառին *բառերը որոշակի չեն, հավանաբար այդ բառերն ավելորդ են փորագրված, քանի որ նախադասությունը ամբողջանում է առանց դրանց՝* եւ եա տիրել սեփական ժառանգութեանն *և այլն։*

*Բնագիրն իր կառուցվածքով ու բովանդակությամբ հիշեցնում է Մորո ձորո վանքում նույն Իվանեի թողած մի այլ ընդարձակ արձանագրություն (սույն պրակի № 260։) Երկու դեպքում էլ սկիզբը շարադրվում է երկու եղբայրների՝ Իվանեի և Զաքարիայի անունից և հանրագումարի բերվում նրանց մղած պատերազմները օտար նվաճողների դեմ, թվարկվում ազատագրված բնակավայրերն ու ամրոցները։ Ապա հաղորդվում է Զաքարիայի մահվան և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով կատարվող շինարարության կամ նորոգության մասին։ Այսպիսով, այս բնագիրը կարող է ծառայել իբրև գավթի շինարարական արձանագրություն, վկայելով, որ նրա կառուցումը ավարտվել է Զաքարիայի մահվանից (1213) ոչ այնքան ուշ։ Սակայն գավթի արձանագրություններում կան այնպիսինները, որոնք փորագրվել են Զաքարիայի մահվանից, ուրեմն և գավթի շինությունն ավարտելուց տարիներ առաջ։ Այսպես, սույն պրակի № 24 բնագիրը 1208 թ. է, № 72-ը 1207թ., իսկ մուտքի ներսում փորագրված Գերգի նվիրագիրը ստուգապես թվագրված է ՈԼ (1181 թ.)* ի թագաւորութեան Գեաւրգեա, *երբ Զաքարեան և Իվանեն Վրաց արքունիքում դեռ չէին հասել իրենց բարձր դիրքին, և այդ պաշտոններում էր նրանց հայր Սարգիսը։*

*Հավանական է մտածել, որ Իվանեի խոսքը ոչ թե գավիթը ի նորո շինելու մասին է, այլ նորոգելու, վերականգնելու, ըստ որում* շինել *բայը վիմագրության մեջ հաճախ արտահայտում է նաև* նորոգելու *իմաստ։ Մյուս կողմից, հնարավոր է նաև, որ վաղ շրջանի մեր նշած նվիրագրերը փորագրված լինեն ավելի ուշ, սակայն տարեթվերը դրված լինեն հինը, նախնականը։ Իբրև նման օրինակ կարելի է մատնացույց անել Մորո ձորո վանքի 1197 թ. բնագրերից մեկը (№ 258), որտեղ Իվանեի քույր Նանան հայտնում է* յորժամ շինեաց Իւանէ զվանքն Մորո ձորո..., *մինչդեռ նույն հուշարձանի այլ վիմագրերից ակներև է, որ վանքը հիմնադրվել է դրանից գարեր առաջ և Իվանեն ոչ թե շինել, այլ նորոգել է Մորո ձորո վանքի Աստվածածին եկեղեցին։*

***24. ԳԱՎԻԹ.*** *արտաքուստ, մուտքի ճակատակալ քարի վրա, 13 տող.*

ԹՈՒ|ԻՆ| ՈԾԵ (1206), Ի |ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԷՐ|ՈՒԹԵԱՆ ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ| ԵՒ
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ͞Ր ՍՏ|ԵՓԱՆՆՈՍԻ, ԵՍ՝ ԽԱԼԹ, ՈՐԴԻ ՍՄՊԱ|ՏԱՅ, ԻՄ ԳԵՂՆ
ՔԱՆԱՔԵՌ ՍԿԱՆԴԱՐԱՆ|Ց ՀՈՂՆ ԳՆԵՑԻ ԵՒ Ի ՀԱՂԱՐԾԻՆՍ ԷՏՈՒ, ՎԱՍՆ Ի|Մ
ՀՈԳՈՅՍ ԵՒ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐՈՒԹԵ|ԱՆ ԿԵՆԱՑ ՇԱՀՆ|ՇԱՀԻ ԵՒ ՍԻԱԳԻՆ. ԵՒ ՄԻՍ-
ԲԱՆՔՍ ԶԾԱՌԱԶԱՐԴԱՐ|ԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԴԱԼԸՍՏԵԱՆՆ ԺԱՄՆ ԻՆՁ ԷՏՈՒՆ ԶԱՄ|ԵՆ
ԵԿԵՂԵՑԵԱՑՍ։ ՈՎ ԶԱՅԳԻՆ ԱՍՏԻՑ ՀԱՆԷ, ԿԱՄԶԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ. ԻՄ ՄԵՂԱՑՍ
ՏԷՐ Է ԵՒ ՅՈՒԴԱ|Ի ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ։

Հրատ. Շահխաթունյանց, Բ, 604, Ջալալյանց, Ա, 132, Սմբատյանց, 183, Բարխուդարյանց, 138, Տեր-Մովսիսյան, 68, ՎՏ. 47, Եղիազարյան, 1954, Ժ, 41։

Լուսանկ. 7

**25. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի շրջանակի վրա, շրջանակի եզրերին, 1 տող.*

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ԳԱԳՍ ԵՒ ԱՇՈՏ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ԶՄԵՐ ՀՈԳԻ ՊԱՀՈՒՍՏՆ ՅԱԾԱԾՆԻՍ ՇԻՆՈՒԹԻ[Ւ]Ն[Ս] ՏՒԱՔ: ԵՊԻՍԿ[ՈՊՈՍ], Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ[, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ, Ի ՏԱՒՆԻ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ՈՐԶԱՓ ԵՍ ԿԵՆԴԱՆԻ Ե[Մ]:

*Հրատ. Ջալալյանց, Ա, 131, Տեր-Մովսիսյան, 68, Եղիազարյան, 1954, ժ, 40*

Դիտելիք. *Հորիզոնական տողի վրա* եպիսկ վդ և միաբանքս *Տեր-Մովսիսյանը և Եղիազարյանը, հետևելով Ջալալյանցին, կարդացել են.* որ սարկաւագ վարդապետ և միաբանք, *որ ակնհայտ վրիպում է, քանի որ հազիվ թե սարկավագը հիշատակվեր վարդապետից առաջ:*

**26. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի շրջանակի հյուսիսային մասում, ներքևից, 2 տող.*

ԵՍ՝ ՍԱՐԿԱՒԱԳ ԶԻՄ ՀՈԳՒՈ ԱՐԴԻՒՆՍ Ի ՏՐ ԳՐԻԳՈՐՍ ԼՏՈՒԻ: ՀԱՅՐՍ ԵՒ ՄԻԱԲ[Ա]ՆՔՍ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԼՏՈՒՆ ԻՆՁ Ի ՏԱՒՆԻՆ ԿԻՒՐՂԻ: ՈՎ ԶԱՌՆԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

*Հրատ. Ջալալյանց, Ա, 131, Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ժ, 41.*

Դիտելիք. Սարկաւագ *նվիրատուի անունն է: Առաջին տողում* ի սր. Գրիգորս Լտուի, հայրս եւ միաբանքս Ա պատարագ Լտուն *նախադասությունները բոլոր վերծանողները ճիշտ չեն կարդացել՝* Լտու ի հայրս և միաբանքս: *Սխալն առաջացել է* Լտուի *բառաձևի բառանջատումից, որ գրվել է երկու* Լտու *և* ի *նախդիր, մինչդեռ նույն ժամանակների այլ վիմագրերից հայտնի է, որ* տամ *բայի անց. կատարյալ ժամանակի I դեմքը կարող է լինել նաև* տուի, Լտուի, Լտուի, *այսինքն* ի *դիմային վերջավորության հավելումով, մյուս բայերի հետևությամբ.*

**27. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի շրջանակի վրա, նախորդի տակ, 2 տող:*

Ի ՏԱՒՆԻՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ :Ա: ԺԱՄ ԱՌՆԵՆ ՇԵՐԱՆՇԱՀԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

*Հրատ. Ջալալյանց, Ա. 131, Տեր-Մովսիսյան, 68, Եղիազարյան, 1954, ժ. 41:*

**28. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի շրջանակի ձախ կողմում, նախորդի տակ, 2 տող.*

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ԵՍ՝ Ք[Ր]ԻՍՏՈ[Ս]ԱՏՈՒՐ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՍ: Վ[Ա]Ր[Դ]Ա]ՊԵՏ ՅՈՎԱՆ[Է]Ս ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ :Ա: ՊԱՏԱՐԱԳ [ԵՏՈՒՆ] Ի ՏԱՒՆԻ ՏՐ ՅԱԿՈԲԱ: ԽԱՓԱՆՈՂՆ ԴԱՏ[Ի]:

*Հրատ. Ջալալյանց, Ա, 133, Տեր-Մովսիսյան, 80, ՎՏ 238, Եղիազարյան, 1954, ժ, 43:*

**29. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի շրջանակի վրա, բարավորից հյուսիս, 4 տող.*

Ի ՏԱՒՆԻ ՔԱՌԱՍՆԻՑ ՏԱՐՆԻՆ :Ա: ՊԱՏԱՐԱԳ [Է]ՏՈՒՆ ՄԽԻԹԱՐԱ ԵՒ ՍԻՍԱԻՆ ՏՐ Յ[Ո]Վ[Ա]ՆԷՍ[Ի] ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ԱՆԽԱՓ[Ա]Ն:

*Հրատ. Եղիազարյան, 1954, ժ, 41,*

**30. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, մուտքի կամարին, 2 տող.*

ՍԻՐՈՎՆ ԱՅ, ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ՏԻԿԻՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՍ: ՏՐ Յ[Ո]Վ[Ա]ՆԷՍ[Ի], ՍԱՐԳԻՍ Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ[Ի] ԵՒ ՄԻԱԲ[Ա]ՆՔ :Բ: ՊԱՏԱՐԱԳԵԼ՝ Ձ:Ա: ԱԲ-ՐԱՀԱՄԱ ԵՒ :Ա: ՏԻԿՆՈՋ, Ի ՏԱՒՆԻ ՈՍԿԵԱՆՑ: ՈՎ ԶԱՌՆԷ, ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

*Հրատ. Ջալալյանց, Ա, 132, Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ժ, 41:*

Լուսանկ. 8

Դիտելիք. Ի տաւնի Ոսկեանց *Եղիազարյանը կարդացել է* տաւնի Ոսկերերանայ, *որ խիստ հեռու է քարի վրա փորագրվածից: Նույն կապակցությունը Ջալալյանցը վերծանել էր ավելի անիրական՝* և զկեանս Տաւնիոսի.

31. ԳԱՎԻԹ. արտաքուստ, մուտքի կամարի վրա, նախորդի տակ, մեկ տողով։
ԿԱՄԱՒՆ ԱԾ, ԱՂԻԲԵԿ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԱՒԹԱ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՐԲՈՑ։ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱ⌊ԲԱՆՔ⌋...

Հրատ. Տեր-Մովսիսյան, 69.

Դիտելիք. Նվիրատուի անունը Տեր-Մովսիսյանը վերծանել է Ցաղիբեկ իսկ Աւթա-ն բաց է թողել։ Հագարծնի վանքի վիմագրերում քանիցս վկայված Աւթա իգ. անունը չի ստուգաբանված և տեղ չի գտել Հր. Աճառյանի բառարանում։

32. ԳԱՎԻԹ. արտաքուստ, մուտքի հարավային կողին, ներքևում, 4 տող.
Ի ՏՍԻՆԻ ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉԻՆ ։⌊Գ⌋։ ՊԱՏԱՐԱԳ ԱՌՆԵՆ ՍԵՒՆՈՍ|ՈՑ, ՍԻՍԱՑԻՆ ԵՒ ՏՈՒՐՔԿԱՆՆ։ ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ։

Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 43.

Դիտելիք. Նվիրատուների անունները՝ Սեւնոս, Սիսա անսովոր են և վկայված են միայն այստեղ։ Մյուս անունը Տուրքիկ է, առաջացած Տուրք-ից։

33. ԳԱՎԻԹ. արտաքուստ, մուտքի հարավային մասում, նախորդի տակ, 4 տող.
ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ԵՍ ՓԱՏԼ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՍԻՄԱ ՏՈՒԱՔ ԶՄԵՐ ՓՇՐՈՆՑ ԱՅԳԻՆ Ի ՍԲ ԳՐ|ԻԳՈՐՍ։ ԱՌԱՋՆՈՐԴ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵԶ ԺԱՄ ՋԿՆԻ ՍԱՀԱԿԱ ՏԱՒՆԻՆ| ԿԻՐԱԿԷԻՆ, ԶԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ։ ԱՐԴ, ՈՎ ԶԱՅԳԻՆ ԱՍՏԻ ՀԱՆԷ ԿԱՄ ԶՄԵՐ ԺԱՄՆ| ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ։

Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 41.

Դիտելիք. Մուտքի շրջանակի հարավային կողին փորագրված այս բնագիրը Եղիազարյանը երկու մասի է բաժանել և ներկայացրել իբրև առանձին նվիրագրեր, մինչդեռ ակնհայտ է, որ կիրակեին բառով սկսվող հատվածը ինքնուրույն չէ, այլ առաջին մասի անհծքի ձևակերպումը։ Փշրոնց հավաքական առհմանունը անծանոթ է դասական հայերենին և կարող էր առաջանալ եանք, եանց > ենք, ենց վերջավորությունները առնմանության աղդեցությամբ ոնք, ոնց փոխակերպելով (հմմտ. այլ բնագրերում՝ Աշոտոնք, Տոլոզոնոնք, Թորոսոնք և այլն)։

34. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հարավ, 7 տող.



ԵՍ՝ ԶՍԻԶԱՅՍ| ԶԻՄ ՀՈԳՈՑ ԱՐԴ|ԻՒՆՍ Ի ԳԱՒԻԹՍ ՏՎ|Ի։ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Է|ՏՈՒԻՆ ԻՆՁ ԶԱՄՏԿԻՆ| ։Բ։ ԺԱՄ։ ՈՐ ԽԱՓ|ԱՆԷ, ԴԱՏԻ ⌊Ի⌋ ՏԷ։

Հրատ. Ջալալյանց, Ա, 135 Տեր-Մովսիսյան, 81, Եղիազարյան, 1954, Ժ, 42.

Լուսանկ. 9

Դիտելիք. Վերծանողները ի զաւիքս տվի հրատարակել են՝ եսու ի զաւիքս սբ Գրիգորին, որ անիրական է։ Ջալալյանցը զիմ հոգոյ արդիւնս վերծանել է զիմ հոգւոյ բաժինն, իսկ եսուն ինձ զատկին :բ: ժամ-ը՝ խոստացան առնել ինձ պատարագ ի տաւնի Պաւղոսի և Պետրոսի։ Նույնը կրկնել է Տեր-Մովսիսյանը։

*35. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հարավ, 6 տող.*



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՑ, :Ա: |ՊԱՏԱՐԱԳ ՀԱՍ-ՏԱՏ|ԵՑԱՔ ՊԱՒՂՈՍՈ, Ի Տ|ԱՒՆԻՆ ՊԱՒՂՈՍԻ ԵՒ| ՊԵՏՐՈՍԻ: ՈՎ, ԽԱՓ|ԱՆԷ, ԴԱՏԻ Ի ՏԷ:

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 42,*
Լուսանկ. 9

*36. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հարավ, 8 տող.*



ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԳՈՐԳ ՋՄԵՐ| ⌈ՀՈ⌉ԳՈ ԱՐԴԻՒՆՍ ԵԿԵՂԵՑՈ|ՑՍ ՍԱԼՍ ՏՎԱՔ ԵՒ ԱՌԱՋՆՈ|ՐԴԻՔ ՍՈՐԱ :Ք: ԺԱՄ ՏՎԻՆ ՄԵԶ, Ի |ՏԱՒՆԻ ՍՔ ԳՐԻԳՈՐԻՆ :Ա:| ԳՈՐԳԱ, ԵՒ :Ա: ԳՐԻԳՈՐՈ|: ՈՎ, ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱ|ՑՆ ՏԷՐ Է:

*Հրատ. Եղիազարյան 1954, Ժ, 43,*
Լուսանկ. 9

*41. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, 6 տող.*



⌈Կ⌉ԱՄԱՒՆ ԱՑ, ԵՍ՝ ՑՈՎԱՆԷՍ| ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՏԻՐԱՆՑ ՄԻ|ԱԲԱՆԵՑԱՔ ՍՔ ԳՐԻԳՈՐ|ԻՍ: ՏՐ Յ⌈Ո⌉Վ⌈ԱՆԷՍ⌉ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ|⌈Ս ԵՏՈՒՆ ՄԵԶ :Դ: ՊԱՏ|Ա. Ր⌈Ա⌉Գ. Ի ՏՕՆԻ ՍԱՀԱԿ⌊Ա⌋:

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ,43*

Դիտելիք. 2-րդ շարքում ամուսին իմ Տիրանց *Եղիազարյանը վերծանել է* ամուսին իմ Տիրերեց, *որ անհամողիչ է, ըստ որում* Տիրանց *իդ. անձնանունը տարածված էր այդ դարերի վիմագրերում, իսկ* Տիրերեց-ը *անիմաստ է։ 4-րդ շարքում* տր Ցվ եւ միաբանքս *Եղիազարյանը վերականգնել է...* տվ եւ միաբանքս, *շարունակության վրա.* Դ: պատարագ ի տաւնի Սահակայ *նույն հեղինակի մոտ դարձել է.* Դ: ժամ ի տաւնի Սուրբ Գրիգորի:

37. *ԳԱՎԻԹ. արտաքուստ, արեւմտյան պատին, մուտքից հյուսիս, 6 տող.*



ԵՍ՝ ՅԱՅԼԹՈՒԹ|ԱՆ ՄԻԱԲԱՆ|ԵՑԱ ՍՐԲՈ|ՅՍ: ՏԷՐՆ ԵՒ| ՄԻԱԲԱՆՔՍ Ա| ՊԱՏԱՐԱԳ ԷՏՈՒՆ:

Հրատ. *Եղիազարյան, 1954, Ժ, 42,*

Դիտելիք. *Անձնանունը՝* Յայլթութան *Եղիազարյանը վերծանել է* Յայլ թութան, *նորագյուտ է և այստեղ առաջին անգամ է հանդիպում։ Շարունակությունն անհայտ է։* Տէրն և միաբանքս *Եղիազարյանը կարդացել է* տեառն և միաբանքս, Ա պատարագ եւտուն-ը՝ :Ա: պատարագել:

39. *ԴԱՎԻԹ. արտաքուստ, արեւմտյան պատին, մուտքից հյուսիս, կից, 5 տող.*



ԵՍ . . . . . . . . ԶԻՄ ՀՈԳՈՅ| ԱՐԳԻԻՆՔՈ Ի ԳԱԻԻԹՍ ԷՏՈՒ: ԵՒ ՄԻԱԲԱ|ՆՔՍ Ի ՏԱՐԻՆ Ա: ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆՁ, Ի ՏԱԻ|ՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է:

Հրատ. *Եղիազարյան, 1954, Ժ, 42.*
Լուսանկ. 8

Դիտելիք. Նվիրատուի անունը դիտավորությամբ ջարդված, գրերը հարթված են և անհնար է վերականգնել։

38. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հյուսիս, կից, 9 տող.



⌜Ե⌝Ս՝ ՄԱՐԴԱՇԱՀ| ⌜Զ⌝ԻՄ ՀՈԳԻՈ ԱՐ-ԴԻՒ|⌜Ն⌝Ս Ի ԳԱՒԻԹՍ Ի⌜Տ|ՈՒ⌝։ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ⌜Դ⌝Ի ՏԱՐԻՆ :Ա: ԺԱՄ ԷՏ|⌜ՈՒ⌝Ն ԻՆՁ, Ի ՏԱՒՆԻ| ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲ|Ա։ ՈՐ ԽԱՓԱՆԷ, Ի|Մ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է։

Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 43, Լուսանկ. 8,10

40. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հյուսիս, նախորդի տակ, 4 տող։



⌜Ե⌝Ս . . . . . ՍՄԲԱ⌜Տ⌝ ԷՏՎԱՔ Ի ԳԱՒԻ|⌜Թ⌝Ս :Ի: ԴԱՀԵԿԱՆ։ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԼՏՈՒ|Ն ՄԵԶ Ի ՏԱՐԻՆ :Ա: ԺԱՄ, Ի ⌜Տ⌝ԱՒՆԻ ՍՐԲՈՑ Ք|ԱՌԱՍՆԻՑՆ։ ՈՐ ԽԱՓԱ⌜Ն⌝Է, ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ⌞ՏԷՐ Է⌟։

Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 42, Լուսանկ. 8

Դիտելիք. Առաջին նվիրատուի անունը դիտավորությամբ ջարդված, գրերը հարթված են, և անհնար է վերականգնել։ Էտվաք բալաձևում Ե նախահավելվածը կիրառված է անհարկի, որ հաճախ է դիտվում այս դարերի վիմագրության մեջ և ապացույց է, որ Ե(Է) տառակաճի նշանակությունն արդեն մթագնած էր։

**42. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից վերև, 6 տող.*



ԵՍ՝ ԲԱՐՍԵՂ [Ի]Մ ՀՈԳՈՑ| ԱՐԴԻԻՆՍ Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ ԷՏՈՒ|: [ԵՒ] ՄԻԱԲԱՆՔՍ :Ա: ՊԱՏԱՐԱԳ| [Հ]ՐԱՄԱՑԵՑԻՆ ԻՆՁ, Ի ՏԱՒՆԻՆ| ԳԱՑԻԱՆԷ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱ|Տ[Ի] ՏԷ: ԵՒ ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ:

*Հրատ. Ողիազարյան. 1934, Ժ, 43*

Դիտելիք. *2-րդ շարքում նուո՞րալը.Եղիազարյանը հրատարակել է տուաք, դանց առնելով ենթակայի եզակի լինելը՝ եւ՝ Բարսեղ:*

**43. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևմտյան պատի մեջ ամրացված փոքրիկ խաչքարի վրա, 1 տող.*



ԽԱՉՍ ԲԱՐ[Ե]ԽԱՒՍ Է ԲԷԿԻՋԱՆԻ ՈՐԴԻ ՀԱՐՍ... ՏՈՒԱՔ ԱԹՄԱՆՍ ԲԱԹ ՍԲ [Ն]ՇԱՆ: ԹՎԻՆ ՌՂԱ (1642):

Դիտելիք. *Փոքրիկ խաչքարը խորշի մեջ է դրվել ուշ ժամանակներում, հավանաբար ժԷ դարում կատարված նորոգումների ընթացքում: Բնագիրը եղծված, վնասված է և լիակատար վերծանություն չի ենթարկվում: Խաչքարը նվիրված է Բէկիջանի որդուն, որի անունը և նվիրաբերած արժեքները չեն վերականգնվում:*

**44. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հյուսիս, վերևում, 8 տող*



. . . . . . . . . . . . . [Ե]Ի ԵՂԲԱՑՐ ԻՄ ԱՂԷԿԱՑՃՈՐՏ ՏՈՒ|[Ա]Ք ՓՈՔՐ ԸՆՁԱ Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ ՑՈՒ|ՍՈՎ: ԵՒ ՀԱՍՏԱՏԷՑԻՆ ՄԵԶ :Բ: Ժ|[Ա]Մ ՍԲ ՀՌՈՄՍԻՄԵԱՆՑ ՏԱՒՆ|[Ի]Ն: ԿԱՏԱՐԻՉ[Ք] ԳՐՈՑՍ ԱՒՐՀՆԵԱԼ| [Ե]Ղ[Ի]ՑԻՆ Ի ՔԷ, ԵՒ ՈՐ ԽԱՓԱՆԷ, ՑՈ[Ւ]|ԳԱ[Ւ] ԵՒ ԿԱԵՆԻ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՊԱՐՏ|[Ա]Կ[Ա]Ն Է:

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԺ, 43,*
Լուսանկ. 8, 11

Դիտելիք. *Բնագրի առաջին տողը շենքը վերանորոգելիս վնասվել, գրերը եղծվել են։ 2-րդ շարքի սկիզբը ես դժվարությամբ է վերականգնվում։ Եղիազարյանն այս մասում վերծանել է...* ու իմ Աղեկայ ճորտ տուաք փոքր ընծա և *այլն, որ այնքան էլ իրական չէ։* Աղեկայճորտ *ար. անձնանունը այս դարերի վիմագրերում հաճախ է հանդիպում, թեև տեղ չի գտել Հր. Աճառյանի բառարանում։ Անձնանունը հարկ չկա բաժանելու երկու մասի՝* Աղեկայ ճորտ, *ինչպես վարվել է Եղիազարյանը՝* Աղեկաճորտ *կամ* Աղեկայճորտ *առաջանում է* հայ. աղեկ և ճորտ-փոքրավոր, ծառա *բառերից։*
*3-րդ շարքում* ընծա *արտացոլում է* Մ>Զ *ձայնեղացում, որ ընդհանրական օրինաչափություն է* Ն *ձայնորդին հաջորդող դիրքում։*

**45. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևմտյան պատին, 5 տող.*



ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ ԶԻՄ ՀՈԳ|ՈՅ ԱՐԳԻԻՆՍ ԵԿ|ԵՂԵ
ՑԻՍ ԼՏՈՒ։ Ա ՊԱՏԱՐԱԳ ⌈Ա⌉ՌՆԵՆ ԻՆՁ Ի ՆՈՐ
ԿԻՐԱԿԵԻՆ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 42։*

**46. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, արևելյան պատի հարավային անկյան մոտ, 3 տող.*



ԵՍ՝ ԱՐՏԱԽԱԶ ԶԻՄ| ՀՈԳՈՅ ԱՐԴԻԻՆՍ
⌈ԵՏ⌉|ՈՒ Ի ՇԻՆՈՒԹԻ⌈ԻՆ⌉ՏԱՆՍ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 31։*

Դիտելիք. *Նվիրատու պարոն* Արտաւազն *է, հավանաբար Հաղարծնի վանքի հովանավորը և Զաքարյան Իվանեի* ճաւատարիմ եւ սիռացեալ վասալը: *Նրա և իր ամուսին* Աւթայի *խաչարձանը ընդարձակ տապանագրով գտնվում է գավթի արևելյան պատի տակ (սույն պրակի № 63)։ Երկու բնագրից էլ երևում է, որ պարոն Արտաւազը զգալի միջոցներ է հատկացրել գավթի շինությանը։*

**47. ԳԱՎԻԹ.** *արտաքուստ, հյուսիսային պատի արևելյան անկյունում, արձանագրության բեկոր, 2 տող.*



. . . ՈՍԻ ՏԱԻՆԻՆ ։Ա։ ԱԻՐ ԺԱՄ։ ՈՎ|
ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է։

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 43։*

Դիտելիք. *Պակասող մասում Եղիազարյանը վերականգնել է* Նփխսոսի տաւնին, *սակայն հնարավոր են նաև այլ վերականգնումներ, ասենք* Թեոդորոսի, Կոստանդիանոսի, *ուստի անփոփոխ ենք թողնում եղածը։*

48. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան մուտքից հյուսիս, 7 տող.



ԵՍ՝ ՎԱՍԱԿ ՁԻՄ ՀՈ|ԳՈ ԱՐԴԻՒՆՔՍ Ի ԳԱՒԻ|ԹՍ ԷՏՍԻ։ ԵՒ ՄԻԱԲԱ|Ն|ՔՍ :Բ: ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆՁ, Ի| ՏԱՒՆԻ Դ|Ա ՁԱՐՈՒ Ա|[Ն]ԽԱՓԱՆ։ ԵԿԵՂԵՑՊԱՆ| ՎՃԱՐԷ։

*Հրատ. Եղիազարյան, 1931, Ժ, 42։*

Գիտելիք. *Վերջին նախադասությանը՝* եկեղեցպան վճարե *ուղղակի չի կապվում նվիրագրի հետ և կարող է ընդմիջարկություն համարվել։ Թվում է գործարքի հեղինակները ցանկացել են շեշտել, որ նվիրատուին հատուցվելիք պատարագները պետք է կատարի* եկեղեցպանը *կամ* վանահայրը, վանքի առաջնորդը։

49. ԳԱՎԻԹ. արտաքուստ, հյուսիսային պատին, 7 տող.



[ԵՍ]Ս՝ ՄԽԻԹԱՐ ԱԶԱՏ| ԳՈՂՈՎ ՁԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆ[Ս]Ս Ի[Ն]| ԳԱՒԻԹՍ ԷՏՈՒ։ ԵՒ ՄԻԱԲԱՆ[Ք]Ս Ի ՏԱՐԻՆ .Ա. ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆ[Ձ]| [Ի] ՏԱՒՆԻ ՎԱՐԱԳԱ ՍԲ ԽԱՉԻՆ։| ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵ-ՂԱՑՍ|՝ ՏԷՐ Է։

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 31*

Գիտելիք. *Առաջին տողում* ազատ գոլով *Եղիազարյանը կարդացել է* անարժան գոլով, *ըստ որում* անարժան *տառաշարքում առաջին* ա-*ից բացի մյուսները վերականգնել է հեղինակը։ Հավանական է թվում, որ նվիրատուն* ազատ գոլով *ասելով ցանկացել է ընդգծել իր սոցիալական կացությունը, կախվածության առտիճանը, կամ ղուցե նպատակ է ունեցել նշել, որ ինքն* ազատ *է* տնօրինելու *նվիրվող արժեքները։*

50. ԳԱՎԻԹ. արտաքուստ, տրևմտյան պատին, մուտքից հյուսիս, 4 տող.



ՎԱՐԴԱՎԱՌ|ԻՆ :Ա: ԺԱՄ Ա[Ր]|ՆԵՆ ՎԱՇԸՄ|ԲԵՐԻՆ։

*Հրատ. Եղիազարյան, 1954 Ժ, 42։*

Գիտելիք. *Անձնանունը այլուստ վկայված չէ և չի ստուգաբանվում Հր. Աճառյանի բառարանում։ Անշուշտ, բաղադրված է* Վաշ *և* ըմբեր *բառերից, ըստ որում վիմագրության մեջ* Վաշ *հաճախ է հանդիպում (սույն պրակի № 314) իսկ* ըմբեր-*ը այլ անձնանունների հետ կազմում է ուրիշ անուններ. այսպես, X—XIV դարերի վիմագրերում ունենք՝* Գոըգըմբեր, Վարդըմբեր։ *Թվում է այստեղ անձնանունների երկրորդ բաղադրիչ* ըմբեր-*ը կարող էր ծագել* ընդ *նախդիրից և* բեր (բերել) *արմատից և նշանակել ինչ-որ մեկի* բերած *կամ* տված, *ըստ այդմ,* Վաշըմբեր *կարելի է հասկանալ* Վաշի բերած *կամ* տված, Վարդըմբեր—Վարդի բերած *և այլն։*

*51. ԳԱՎԻԹ. արաաքուսա. մուտքից հյուսիս, խաչքարի եռեւում, 6 տող.*



ԵՄ՝ ՍԻՄՈՆ ԷՐԷՑ ՁԻՄ ՀՈԳՈ Պ[Ա]ՀԵՍՏ|Ս Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ ԵՏՈՒ։ |ՄԻԱԲԱՆՔ[Ս] ՊԱՏԱՐ|ԱԳ ԱՌՆԵՆ ԻՆՋ Ի ՏԱՒՆ|Ի ՑՈՎԱ[Ն]ՈՒ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 42։*

*52. ԳԱՎԻԹ. ներքուստ, մուտքի հյուսիսային կողին, ներքև, 6 տող.*



[Կ]ԱՄԱՒՆ ԱՑ, ԵՄ՝ ՑՈՀԱՆ ՁԻՄ| [ՀՈԳ]ՈՑ ԱՐԴԻՒՆՍ Ի ԳԱՒԻԹՍ ՏՎԻ|։ [ՄԻ]ԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՋ Ի ՏԱՐԻՆ| · · [ԺԱ]Մ, ԵՂԻԱ ԿԱՆՆ ՇԱԲԱԹՆ [Ա]Ն|ԽԱՓ[Ա]Ն։ ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ [ՑԱ]Ց| ԵՒ ԻՄ[Ն] ՄԵՂԱՑՍ Տ[Է]Ր Է։

*Հրատ. Եղիազարյան 1954, ԺԱ, 33,*
Լուսանկ. 12

Գիտելիք. *Առաջին տողում նվիրատուի անունը Եղիազարյանը կարդացել է* Յովհաննես։ *Անեծքի բանաձևում հրատարակված է* մեր մեղացս տէր է, *պետք է լինի՝* իմ մեղացս տէր է, *քանի որ նվիրատուն եզակի է։*

*53. ԳԱՎԻԹ. ներքուստ, մուտքի հյուսիսային կամարի վրա, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ|, ԵՄ՝ ԱԹԱՆԷՍՍ ԵՏՈՒ ՁԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻ[ՒՆ] ԳԱՒԹԻՍ։ ԵՒ ԱՄԷՆ ՄԻԱԲԱՆՔՍ| ՍՐՏԻ ՑԱՒԺԱՐՈՒԹ[ԵԱՄ]Բ ԵՏՈՒՆ ԻՆՋ Ի ՏԱՐԻՆ ԱՒՐ Ա ԺԱՄ, Ի ՊԵՏՐՈՍԻ ԵՒ Ի ՊԱՒՂՈՍ[Ի]| ՏԱՒՆԻՆ։ ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԱՌԱՋԻ ԱՑ ԻՄ ՄԵՂԱՑՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է|, ԵՒ ՑՈՒԴԱՒ ՄԱՍՆԱԿԻՑ։ ՏՐ ԱԾ, ՈՂՈՐՄԻ ՏԻՐԱՏՈՒՐ ՎԱՐԴ[Ա]ՊԵՏԻՆ։ ԱՄԵՆ։

*Հրատ. Ջալալյանց, Ա, 133, Տեր-Մովսեսյան, 81, ՎՏ 237, Եղիազարյան, 1954, ԺԲ, 32։*

Գիտելիք. *3-րդ շարքում* սրտի յաւժարութեամբ *Եղիազարյանը վերծանել է* սուրբ ուխտիս յաւժարութեամբ, :Ա: աւր ժամ-ը՝:Ա: աւր Թմի: *Չի հասկացվում, թե ով է* Տիրատուր *վարդապետը և ինչու է նրա բարեխոսությունը հիշատակված այստեղ։*



3—819

53. ԳԱՎԻԹ. ներքուստ, մուտքի հյուսիսային կողմում, 14 տող.



Ի Թ. ՈՒԻՆ, ՈՂ (1181), Ի ԹԱԳԱՒՈՐՈՒ|ԹԵ ԱՆ՝ ԳԷԱՒՐԳԵԱ, ԵՒ ՑԱՌԱՋ|ՆՈՐԴՈՒ ԹԵ|ԱՆ՝ ՍԲ ՎԱՐԴԱՊԵՏ|ԻՆ ԽԱՉԱՏՐՈ ԵՍ՝ ԳԵՐԳ ՋԱ|ԳԱՐԱԿԻՆ ՀՈՂՆ ՁՏԱՓՈ Ա|ՐՏՆ ԷՏՎԻ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ |ՍՈՒՔԱ ԵՏՈՒՆ Ի ՏԱՐԻՆ :Բ:| ԺԱՄ ԻՆՁ ԵՒ ԻՄ ՆՆՋԵՑԵԼ|ՈՑՆ։ ԹԷ ՈՔ ՀԱԿԱՌԱԿԱ ԿԱՄ ՑԻՄՈՑ ԿԱՄ Ի ՄԵԾԱՑ| ՑԵՐԻՑ ՍԲ ԺՈ-ՂՈՎՈՑՆ| ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ|։ ՋԺԱՄՆ ՆՈՐ ԿԻՐԱԿ|ԻՆ ԱՌՆԵՆ։

Հրատ. Ջալալյանց, Ա. 133, Տեր-Մովսիսյան. 81, Եղիազարյան, 1954, ԺԱ, 33, Լուսանկ. 12, 13

Ծանոթ. Նվիրագիրը փորագրված է Խաչատր վարդապետ Տարոնացու առաջնորդության ժամանակ, 1181 թ., սակայն ինչպես արդեն նշել ենք № 23 բնագրի ծանոթագրության մեջ, այս թվականը հակասում է գավթի կառուցման մասին աթաբեկ Իվանեի արձանագրությանը, ըստ որի վիմարդեան գավիթը կառուցվել է Զաքարիայի հիշատակին, նրա մահվանից հետո (1213)։ Հավանական է մտածել, որ այս բնագրում հիշատակված՝ Ազարակի հողն ու Տափն արտը Գերգը նվիրել է նշված թվականին (1181), բայց այդ մասին արձանագրվել է ոչ թե ս. Գրիգոր եկեղեցու պատին, որին տրվել են այդ նվերները, այլ եկեղեցու՝ ավելի ուշ կառուցված գավթի մուտքի վրա՝ ներսից։

54. ԳԱՎԻԹ. ներքուստ, մուտքի հարավային կողմում, 13 տող.



ԵՍ՝ ԱՆՏ|ՈՆ ԴՍԵ|ՂԵՑԻ ԵՒ Ի|Մ ԵՂԲԵՐՍ| ՍԱՐԳԻՍ Ջ|ՄԵՐ ՀՈԳՈՑ Ա|ՐԴԻՒՆՍ Ի Գ|ԱՒԻԹՍ ՏՎԱՔ|։ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ|Ս ԷՏՈՒՆ .Ա. ԺԱ|Մ, Ի ՏԱՒՆԻ ԱՆՏՈ|ՆԻ։ ՈՐ ԽԱՓ|ԱՆԷ, ԴԱՏԻ |Ի| ՏԷ։

Հրատ. Ջալալյանց, Ա, 133, Տեր-Մովսիսյան,81, ՎՏ 237, Եղիազարյան, 1954, ԺԱ, 32,

Ծանոթ. 4-րդ տողում իմ եղբերս բոլոր տեղագրողները վերծանել են իմ եղբարս, որով անտեսվել է եղբայր բառի մեջ այ երբեմնի երկբարբառի պարզումը ե (է) ձայնավորի, որ հաճախ է դիտվում վիմագրերում և անշուշտ գալիս է տեղական խոսվածքներից։

*56. ԳԱՎԻԹ. Ներքուստ, մուտքի կամարի ներքևի մասում, 2 տող.*



Ի ՏԱԻ՛ՆԻ ԱԻԵՏԵԱՑ ԱԾԱԾՆԻՆ .Բ. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՁԻ ԱՄԷ՛Ն ՏԱՐԻ ԿԱ ԵՆԵՑԻ|
ԲԱՐՍԵՂ Վ⌈ԱՐ⌉Դ⌈ԱՊԵՏ⌉ԻՆ ԵՒ ԻԻՐ ՄԱԻՐՆ: ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՑ:

Հրատ. *Եղիազարյան, 1954, ԺԱ, 32*

*57. ԳԱՎԻԹ. Ներքուստ, մուտքի հյուսիսային կողի վրա, 9 տող.*



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՑ, ԵՍ՝ |ՍԱՐԳԻՍ ՁԻՄ ՀՈԳՈ|
⌈ԱՐ⌉ԳԻՒՆՍ ԷՏՈՒ Ի ԳԱՒ|⌈Ի⌉ԹՍ, ԵՒ ԱՄԷՆ
ՄԻԱԲԱՆ|ՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՁ Ի ՏԱՐ|ԻՆ :Ա:
ԺԱՄ ՎԱՐԳԱ|ՎԱՌ ԱՒՐՆ: ՈՐ ԽԱՓ|ԱՆԷ,
ՑՈՒԴԱՑԻ ԼԻՆԻ Մ|ԱՍՆԱԿԻՑ:

Հրատ. *Եղիազարյան, 1954, ԺԱ, 33*
Լուսանկ. 12, 13

*58. ԳԱՎԻԹ. Ներքուստ, հարավային սյուները միացնող կամարի հիմքի վրա, 24 տող.*



ՑՈՒՍՈՎՆ Ա̅Ց, ԵՍ՝ |ՋՈՍԻՄԱ ՔԱՀԱՆԱ| ԵՒ ԵՂԲԱՑՐ ԻՄ ՍԱՂԱ|ԹԻԷԼ ԸՆԾԱԵՑԱՔ| Ի
Տ̅Բ ԳՐԻԳՈՐՍ Ձ|ՄԵՐ ՀՈԳՈ ԱՐԴԻՒ|ՆՍ ՑԱՌԱՋՆՈՐԴ|ՈՒԹԵ⌈ԱՆ⌉ ՏԻՄՈԹԻ: ՍՊ|ԱՍԱՒՈՐՔ

ՍՐԲՈՑՍ| ԵՏՈՒՆ ՄԵԶ :Բ: |ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՐԻՆ|: ԱՂԱՉԵՄ Վ[Ա]Մ[Ն] ՍԻՐ|ՈՑՆ ՔԻ ՑԻՇԵԼ Ց|ՍՂԱՒԹՍ ՁԵՐ ԱՍ|ԵԼՈՎ. ՏՐ ԱԾ ՈՂՈՐ|ՄԵԱ ՍԱՂԱԹԻԷԼ|Ի ԵՒ ՋՈՍԻՄԱԻՆ Ի Ք|ՈՒՄ ԳԱԼԸՍՏԵՆՏ| :ԱՄԷՆ: ՑԻՇՈՂՏ ՑԻՇ,ԵԼ ԵՂԻՑԻՔ Ի ՏՐ|: ՍԲ ՓԱԿԱԿԱԼ ԱՂԱՉԵՄ ՄԻ ՄՈՌԱՆԱԼ|, ԶԻ ՄԻ ՄՈՌԱՑԻՆ ՀԱՏՈՒՑԱՆՈՂՆ ՏՐ| ՔՍ Ի: |Ի ՓՐԿՈՒԹԵ[Ա]Ն ՋՈՍԻՄ|ԱԻՆ :ԱՄԷՆ:

Լուսանկ. 15

Գիտելիք. Նվիրատու Ջոսիմա քահանան, ամենայն հավանականությամբ, Հաղարծնի վանքի նշանավոր պղնձե կաթսայի (քոր) ստացողն է, նրա շուրթերի ձուլածո արձանագրության հեղինակը: Հայաստանի պատմության թանգարանում պահվող այդ կաթսայի արձանագրությունը հետևյալն է. Ի թվին ՈՁԱ (1232), ես՝ Ջոսիմա քահանայ մեղապարտ անձամբ ստացա զքորս յարդեանց իմոց. մեաքանքս եռուն ինձ ի տարին :Ա: ժամ Գորգա զաւրավարի տանեին:

*59. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան պատի հարավային որմնակամարի վրա, 3 տող.*



Ի ՏԱԻՆԻ ՍՐԲՈՑՆ ԲԱՐՍՂԻ| Ա. ԺԱՄ ԱՐՆԵՆ. ՏԻՐԱՏՐՈՑ|: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ՑԱՑ:

*60. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան պատի հարավային որմնասյան հիմքի վրա, 3 տող.*



ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ՉԻՄ ՊԱՀԵՍՏ[Ս] Ի ՍԲ| ԳՐԻԳՈՐՍ ԷՏՈՒ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| Ա ԺԱՄ ԷՏՈՒՆ ԻՆՁ ԵՂԵՆ ԱՆ[ԽԱՓԱՆ]:

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 33,*

Գիտելիք. *Առաջին տողում* զիմ պահեստ *Եղիազարյանը կարդացել է* զիմ հոգո արդիւնս, *3-րդ տողում՝* եղեն անխափանը *վերծանվել է* ի տաւնի սուրբ Գրիգորի, *ըստ որում քարի վրա այդքան տառատեղ չի մնում:*

*61. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան պատի միջին որմնասյուներն միացնող կամարի վրա, 21 տող.*



ՍԻՐՈՎՆ ԱՑ,| ԵՍ՝ ՑՈՀԱՆ|ԷՍ ԵՒ ՍԱՐԳԻՍ| ՔԱՀԱՆԱՅՔ| ՏՈՒԱՔ Ի ՍԲ| ԳՐԻԳՈՐՍ Զ|ԱՆԳԻՆ ՄԱՐ.ԳԱՐԻՏՆ Զ|ԱԻԱԳ ՄԱՍՆ, Ա ՇՈՒՐՋԱ|Ռ ԵՒ Ա ԱԻԵ|ՏԱՐԱՆ ԾԱԽ|ԱԻՔ: ԵՒ ՄԻԱԲ|ԱՆՔՍ ԵՏՈՒ,Ն ՄԵԶ ԺԱՄ| ԶՏ[ԵԱՌ]Ն,ԸՆԴԱ|ՌԱՋ ԱԻՐՆ| ԶԱՄԵՆ ԵԿԵ|ՂԵՑԻՔՍ|: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱ|ՏԻ ՑԱՑ: [ԹՈՒԻՆ] ՈԿԶ (1217):

*Հրատ., Տեր-Մովսեսյան, 81, Եղիազարյան, 1954, ԺԱ, 33,*

Գիտելիք. *4-րդ շարքում վերծանողները բաց են թողել* քահանայք *բառը:* Զանգին մարգարիտն *կարդացել են* ազնագին մարգարիտն, աւետարան ծախաւքը՝ ամեն տարեածաւք, *որ անհարազատ է քարի վրա փորագրվածին և անիմաստ:* Զաւագ մասն *պետք է հասկանալ արժեքավոր* մասնատուփ, տապանակ: Զամեն եկեղեցիքս *բառերի փոխարեն վերծանվել է* ընդովեալ եղեցի:

*62. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան պատի մեջ ագուցված երկու սալի վրա, դեպի եկեղեցին տանող մուտքից հարավ, 18 տող.*



Ի ՈԼԳ ԹՈՒԻՍ (1184) ՀԱՅՈՑ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ⌜Ա⌝ՆՆ ԱՓԽԱԶ|ԱՑ ԳԵՈՐԳԵԱ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ⌜Ա⌝ՆՆ ՀԱՅՈՑ ՏՆ Գ|⌜Ր⌝ԻԳՈՐԻՍԻ, ԵՍ՝ ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՍՈՒՔԻԱՍ| ՆՈՐՈԳԵՑԱՔ ԶՍ̅Բ ԳՐԻԳՈՐՍ, ՀՐԱՄԱՆԱՒ ԹԱԳԱՒՈՐ|ԻՆ ԵՒ ԻՒՐ ՄԵԾԱՄԵԾ ԻՇԽԱՆԱՑՆ՝ ՍԱՐԳՍԻ, ԱՄԻՐ ՔՐ|ԴԻՆ, ԱՆՏՈՆԻ ՃՂՈՒՆՏԵԼԻՆ, ԵԼԲԵԿԻՆ: ԵՒ ԹԱԳԱՒՈՐ⌜Ն⌝| ԶՀԻՆ ԵՒ ԶՆՈՐ ԿԱԶՄՈՒԹԻ⌜Ւ⌝ՆՍ ԳՐՈՎ ԵՏ Ի ՍԲ̅ ԳՐԻԳՈՐՍ| ԶԱՑԳԻՆ Ի ՄԻՋՆԱՇԻՆԻՆ ՋՐԻՆ, ԶՏՆԽԱԶ ԿՈՊԱՐՎԱՆ|ԻՑՍ Ի ՄԻՋԻՆ, ԶՔՈՒՐԴԵԻԱՆՆ, ԶԱԲԱՍԱԶՈՐ ԶՏԱՆՋ|ՈՒՏՆ: ԵՒ ՀՐԱՄԱԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ ԶՍ̅Բ ԽԱԶԻՆ ՏԱՒՆՆ| ԻՒՐ ՑԻՇԱՏԱԿ ԿԱՏԱՐԵԼ: ԱՐԴ, ՈՐՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՆ ԵՒ| ՀԱՆԵԼ ՋԱՆԱՆ, ՔԱԿԵՍՑԻՆ ՏԱՄԲՔ ԵՒ ՈՐԴՈՎՔ ԵՒ Ա|ԶԳԱՒ, ԵՒ ՆԶՈՎԵՍՑԻՆ Ի ՎԱՐՁԸՍ ԱԾԱԾՆԸՆ, ԵՒ: ՑԺԸ: Հ|ԱՅՐԱ-ՊԵՏԱՑՆ, ԵՒ ՋՆՋԵՍՑԻՆ ՑԱՑՍՄ ԿԵՆԱՑ. ՄԱՍՆ| ԵՒ ԲԱԺԻՆ ՆՈՑԱ ԸՆԴ ՅՈՒԴԱՒ ԵՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՒ ԼԻՑԻ|: ԽԱԶԱՏՈՒՐ Վ⌜Ա⌝Ր⌜Դ⌝ԱՊԵՏԻՆ⌝ ԵՒ ՍԻՔԻԱՍԻՆ Ժ⌜Ա⌝Մ⌝ ԱՐԱՍՑԵՆ ԶՀՈԳՈԳԱԼՈՒՍՏՆ ԶԱՄԸՆ ԵԿԵՂ|ԵՑԻՔՍ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 135, Սմբատյանց, 184, Բարխուդարյանց, 367, Տեր-Մովսիսյան, 71, CTE 79, Եղիազարյան, 1954, ԺԱ, 31, Լուսանկ. 16

Գրաբլիք. *Բնագրի գիտական-քննական հրապարակումը՝ պատմա-բանասիրական հանգամանալի վերլուծականով իրականացրել է Ս. Երեմյանն այս արձանագրությանը նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ: Այստեղ սատուգ որոշվում է արձանագրության բնագիրը, պարզվում այն բոլոր տարբերությունները, որոնք ավելի քան մեկ դարի ընթացքում առաջացել էին այս կարևոր արձանագրության ընթերցման և մեկնաբանության մեջ: Պարզվում է, որ Հաղարծնի վանքը XI դարի վերջերին ավերվել էր սելջուկների ասպատակությունների հետևանքով և միայն XII դարի վերջերին, երբ այս գավառում հաստատվում է Արծրունիների և Զաքարյանների իշխանությունը, Վրաստանի թագավոր Գեորգի Գ-ի և հայ իշխանների հրամանով վերականգնվում է վանքի ս. Գրիգոր եկեղեցին: Միաժամանակ Գեորգի թագավորը* զհին և զնոր կազմութիւնս գրով նա ի սբ. Գրիգորս, *այսինքն վերականգնում է Հաղարծնի վանքի հողատիրական իրավունքները, նվիրելով մի շարք գյուղեր ու այգիներ* (զայգին ի Միջնաշինին ջրին, զՏեառնխաչ՝ կոպար վանիցն ի Միջին, զՔուրդնանն, զԱբաաձոր, զՏանձուան): *Եկեղեցու նորոգումը կատարվել է վանքի առաջնորդ, նշանավոր վարդապետ ու երաժշտագետ Խաչատուր Տարոնացու և վարդապետ Սուքիասի ջանքերով:*

*Հավանաբար հենց այդ ժամանակներին է վերաբերում Հաղարծնի հոգևոր ու մշակութային կենտրոնի քաղկեդոնական կողմնորոշումը, որն ակներև է նաև սույն բնագրից. այսպես, անեծքի ձևակերպման մեջ ի թիվս բուն հայկական նզովքների, հանդիպում է նաև՝* եզովեսցին ի Վարձեո Անձծնեն, *որ, անշուշտ, անաղղակիորեն ակնարկ է* Վարձիա *վրացական վանքի հոգևոր գերիշխանության և դավանաբանական միասնության մասին.*

*Բնագրում հիշատակված Սարգիսը՝ Զաքարիա և Իվանե եղբայրների հայրն է, Վրաց ամիրսպասալար Սարգիս Մեծը, Ամիր Քուրդը՝ Արծրունիների իշխանական տոհմի ականավոր շառավիղը, Տփղիսի ամիրան և Մահկանաբերդի իշխանաց իշխանը*[1]:

**63. ԳԱՎԻԹ. *Ներքուստ, արևելյան պատի տակ ընկած գեղաքանդակ խաչքարի կամարի վրա և ներքևի մասում, 9 տող.***



ՇՆՈՐՀԻՒ|Ն Ա̅Ծ, . . . . ԵՍ,
ԱՐՏԱՒԱԶ ՍԻՒ| ԱՄՈՒՍԻՆ ԽՄ
ԱՒԹԱ ՀԱՒԱՏԱՐՒՄ ԵՒ| ՍԻՐԱԾ
ԵԱԼ ԻՒԱՆԷԻ ԵՒ ԶԱՔԱՐԷԻ| ԶՄԵՐ
ՀՈԳՒՈ ԱՐԳԻՒՆՍ ԸՆԾԱԵՑԱ|Ք Ի
ՇԻՆՈՒԹԻ|ՒՆ ԵՒ Ի ՍՊԱՍ ԵԿԵ
ՂԵՑՒՈՅՍ|: ԵՒ ԵԴԱՆ ՈՍԿԵՐՔ ՄԵՐ
ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ| ՍՈՐԱ: ԵՒ ՄԻԱ
ԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵԶ ԺԱՄ Ա̅Ծ|Ա-
ԾԻՆ ԱՒՐՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ
ԱՆԽ|ԱՓԱՆ. ԻՆՁ՝ ԱՐՏԱՒԱԶԱ ԵՒ
ԱՒԹԱՑԻՆ:

Հրատ. *Եղիազարյան, 1954, ԺԱ, 34.*
Լուսանկ. 17

Դիտելիք. *Խաչարձանը կանգնած է եղել գավթի արևելյան՝ դեպի եկեղեցին տանող մուտքի հյուսիսային կողմում գտնվող պատվանդանի վրա: Վերնամասը, որտեղ եղել է արձանագրության*

[1] *Մանրամասն տե՛ս С. Еремян*, Агарцинская надпись 1184г. Сборник в честь И. А. Орбели, М.—Л., 1960 стр. .78—87

*թվականը և նախաբանը, ջարդվել, անհետացել է։ Ինչպես արդեն նշել ենք, պատրոն Արտավազը Հաղարծնի հոգևոր կենտրոնի հովանավորն է եղել, տեղական ազդեցիկ իշխան, որ վասալական կախման մեջ էր Զաքարյաններից* (ճաւատարիմ եւ սիրացեալ Իվանէի եւ Զաքարէի)*: Այս տապանագրից երևում է, որ Արտավազն իր ամուսին* Աւթայի *հետ նպաստավորել են եկեղեցու շինությանը և կահավորմանը* (ի շինութիւն եւ ի սպաս եկեղեցոյս)*, դրա դիմաց գավթի մեջ բացվելու և գերեզմանի վրա սույն խաչքարը կանգնեցնելու իրավունք ձեռք բերելով։* Պատրոն Արտաւազը և Աւթան *իրենց օժանդակությունն են բերել նաև Ն. Գետիկ վանքի ս. Գրիգոր եկեղեցու շինությանը, ուստի և իբրև վանքի հովանավորներ ու միաբանողներ հիշատակված են գլխավոր խորանի կիսակլոր պատի ընդարձակ արձանագրության մեջ (սույն պրակի № 223)։*

*64. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևմտյան մուտքի հյուսիսային կողին, 12 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝| ԳՐԻԳՈՐ ԿԱՐՃԱ|ՀԱՍԱԿ ԶԻՄ| ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆ|Ս ՅԵԿԵՂ,ԵՑԻՍ| ԵՏՈՒ| ԵՒ ՄԻԱԲ|Ա.ՆՔՍ :Բ:| ՊԱՏԱՐԱԳ Ի Տ|ԱՒՆԻ ՍԲ ԳՐԻԳՈՐ,ԻՆ,| ԱՌՆԵՆ ԻՆՁ ԵՒ Ծ՛ՆՈՂ,ԱՑ ԻՄՈՑ|։ ՈՎ, ԽԱՓԱՆԷ, ԴԱՏ[Ի Ի ՏԷ]:

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 33*

*65. ԳԱՎԻԹ. Ներքուստ, հյուսիս-արևմտյան սյուները եկեղեցու արևմտյան պատի որմնասյուների հետ միացնող կամարի վրա, խոյակից արևելք, 10 տող.*



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ԵՍ՝| ԱՊՍՏԱՄԲ ԵՒ ՎԱՐ|ՀԱՄ ԵՒ ԱԽԱԳՍ ԶՄԵՐ Հ|ՍԳՈ ԱՐԴԻՒՆՍ Ի ԳԱՒԻԹՍ| ՏՈՒԱՔ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Ի ՏԱՒՆ|Ի ԱՆՏՈՆԻ .[Բ]. ԺԱՄ ԱՐ ՆԵՆ| ԱՊՍՏԱՄԲԻՆ ԵՒ ՎԱՐՀԱ|ՄԱ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ՅԵՐԻՑ| ՍԲ ԺՈՂ,ՈՎ,ՈՅՆ ՆԶՈՎ|ԱԾ Է:

Դիտելիք. *2-րդ նվիրատուի անունը երկու անգամ էլ փորագրված է* Վ,արհամ, *այսինքն* հ, *ը հնչյունների դրափոխությամբ։ Միջին դարերի վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում դրափոխությամբ ձևը՝* Վ,արհամ *ավելի հաճախ է հանդիպում, քան* Վ,ահրամը *(տե՛ս սույն պրակի № 68)։ Փոփոխված ձևը գալիս է ժողովրդական արտասանությունից։*

*66. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան որմնասյուները միացնող կամարի վրա, 3 տող.*

ԿԱՄՆ Ա̄ՅԵՍՍՄՊԱՏՈՐԴԻԲՌԲԱՔԱԵԻԱՌԻՍԻՆԻՄՏԽԱՍՂՈՒ
ԹՈՒՆ
ՍԻՄ̄ԲԳՐԻԳՈՐՍՏՐՅՈՎ--ԱԷՍ
Վ̄Դ̄ԵԻՄԱԲԱՆՔՍԵՏՈՒՆՄԵՋԺԱՒՏԱԻՆՋԱԵՆԿԵՂԵՑԻՔՍԻՏԱԻ_
ՆԻԿՈՍՏԱՆԴԻՆՈՍԻՈՎԽԱՓԱՆԷՄԵՐՄԵՂԱՑՆՏԷՐԷԱՌԱՋԻՔ̄Ի

ԿԱՄԱՒՆ Ա̄Յ, ԵՍ՝ ՍՄՊԱՏ, ՈՐԴԻ ԲՈՒԲԱՔԱ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՏԽԱՍՂՈՒ|ԹՈՒՆ . .
. . . Ի Մ̄Բ ԳՐԻԳՈՐՍ: ՜ՏՐ ՅՈՎ⌜ԱՆԷՍ| Վ⌜ԱՐ⌝Դ⌜ԱՊԵՏ⌝ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵՋ
ԺՍՄ Ի ՏԱՐԻՆ ՋԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ, Ի ՏԱԻ|ՆԻ ԿՈՍՏԱՆԴԻԱ՛ՆՈՍԻ: ՈՎ, ԽԱՓԱՆԷ,
ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ՔԻ:

Գիտելիք. *Բնագիրը խիստ քայքայված է, եղծված և նշանակված մասը դժվար է վերականգնըվում: Կասկածելի է նվիրատուի կնոջ՝* Տխասղութուն *անունը, անհայտ է վանքին տված նվերը:*

*67. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արևելյան պատի որմնասյուները միացնող կամարի վրա, 4 տող.*

-------------ԵՂԲԱՅՐԻՄՈԹ-ԹՈՄԱՅՍՈՐԴԻՍԱ
-----------ԲԱՐԴԻՆՍԳՒԹՍ--ԱՔՅԱՋՆՈՐԴՈՒԹ̄Ե̄ՀԱԻՍՏԵՓ--ՏՌ
-------------ԺԱԾՆՈՂԱՑՄԵՐՈՑՍ=ԳՍՔԱՀԱ...
-----ԿԱՏԻՉԳՐՈՅՍԱԻՐՀՆԵԼԼԻՑԻՆՅԱ̄ՅԱՄԷ-

. . . . ԵՂԲԱՅՐ ԻՄ ՈԹ . . ԹՈՄԱՅՍ ՈՐԴԻ ՍԱՐ⌜|ԳՍԻ . . . . . . ԱՐԴԻԻՆՍ
ԳԱԻԻԹՍ ⌜ՏՎ⌝ԱՔ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ⌜ԱՆ⌝ ՀԱԻՐ ՍՏԵՓ⌜ԱՆՈՍԻ⌝ ՏՈՒ . | . . . . .
ԺԱՄ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ Մ⌜ԱՐ ԳՍԻ ՔԱՀԱ⌜ՆԱՅԻ⌝ . | . . . . . ԿԱՏ⌞ԱՐ⌟ԻՉ⌞Ք⌟ ԳՐՈՑՍ
ԱԻՐՀՆԵԼ ԼԻՑԻՆ ՅԱ̄Յ: ԱՄԷ⌜Ն⌝:

*68. ԳԱՎԻԹ. Ներքուստ, հյուսիս-արևելյան սյունը հյուսիսային պատին միացնող կամարի արևմտյան երեսին, 3 տող.*

ԵՍՍՍԱՅՍԱՐԱԵԽԱԼԹՍ-----------ՉՄԵՐԱՅԳԻՆՅԱԿԱԲՈՒՄ̄ԲԳՐԻԳՈՐՍՅԱՌ
ԱՋՆՈՐԴՈՒԹ̄Ե̄ՏՄՈԹԻՄԱԲԱՆՔՍԵՏ--ՒԵԿԵՂԵՑԻՔՍՊԱՏԱԱԳԵԼՎԱՀԱԱՉԿՆԻՆՈՐԿԻՐԱԿԵԻՆՈՎ
~ԺԱՆԽԱՓԱԷԿԱՋԱՅԳ=ՅԵԿԵՂ----ՍՀԱԷ---ՌԻԴԱԻՄԱՍՆԱԿԻՑԵՂԻՑԻԹՈՒԿԱՍ: ՌՀ:

ԵՍ՝ ՍԻՍԱՅՍ, ԱՐՍ ԵՒ ԽԱԼԹՍ ⌜ՏՈՒԻԱՔ⌝ ՉՄԵՐ ԱՅԳԻՆ ՅԱԿԱԲՈ Ի Մ̄Բ ԳՐԻԳՈՐՍԻ
ՅԱՌ|ԱՋՆՈՐԴՈՒԹԵ⌜ԱՆ⌝ ՏԻՄՈԹԻ: ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏ⌜Ո⌝ՒՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊՍ ՏԱՐԱԳԵԼ
Վ.ԱՐՀԱ||Ա, ՉԿՆԻ ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ:| ||Վ, ՉԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ, ԿԱՄ՝ ՉԱՅԳ⌜ԻՆ⌝ ՅԵԿԵՂ⌜Ե-
ՑՈՅ⌝|| ՀԱՆԷ, ⌜Ց⌝ՈՒԴԱԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ: ԹՈՒ⌞Ա⌟ԿԱՆՍ ՈՀ (1221):

69. ԳԱՎԻԹ. ներքուստ, արևմտյան դռան ճակատակալին, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՑ, ՄԵՔ՝ ՎԱՐԴՍ ԵՒ Հ|ԱՐԲՍ ՁՄԵՐ ՀՈԳՈ ԱՐԴՒՒՆՍ Տ|ՎԱՔ Ի ԳԱՒԻԹՍ: ԵՒ ԱՄԷՆ ՄԻԱԲ|ԱՆՔՍ ԷՏՈՒՆ ՄԵԶ Ի ՏԱՐԻՆ Բ ԺԱՄ| ՅՈՀԱՆՈՒ ԵՒ ՅԱԿ[ՈԲԱ]
ՏԱՒՆԻՆ՝ Ա ՎԱՐԴՒ|Ն ԵՒ Ա ՀԱՐԲԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ Ի ՏԷ:

Գ․ Հրատ․ Տեր-Մովսիսյան, 81, Եղիազարյան, 1954, ԺԱ, 32,

70. ԳԱՎԻԹ. ներքուստ, արևելյան պատի որմնասյուները միացնող կամարի վրա, 17 տող.



ԵՍ՝ ՆԵՐՍ|ԵՍ ՔԱՀԱ|ՆԱ ԵՏՈՒ Զ|ԱՒԱԴ ԱՒԵՏ|ԱՐԱ[Ն]Ս Ի ՍԲ| ԳՐԻԳՈՐՍ| ԶԱՐԴԱՐ|ԵԱ ՅՈՍԿՈ| ԵՒ ՅԱՐԾԱ|ԹՈ: ԵՒ ՄԻԱԲ|ԱՆՔՍ ԵՏՈ|[Ւ]Ն ԻՆԶ :Դ:| ՊԱՏԱՐԱԳ| Ի ՏԱՒՆԻ
Թ|ՈԴՈՍ ԹԱԴ|[Է]ԱՒՈՐԻ]: ՈՎ ԽԱՓԱՆԷ|, ԶԱՆԷԾՍ [ԱՌՑԷ]:

Հրատ. Տեր-Մովսիսյան, 81, Եղիազարյան, 1954, ԺԱ, 34

71. ԳԱՎԻԹ. ներքուստ, արևմտյան պատին մուտքի կամարից հարավ, 6 տող.



ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ, ՈՐԴԻ ԱՐԵՒԳ . . ՈՆԵՏԻՆ ԷՏՈՒ ԶԻՍ| ԼԱՒ ԸՆԾԱՅՍ Ի ԳԱՒԻԹՍ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ԷՏՈՒՆ ԻՆԶ ՄԻԱԲԱՆՈՒԹԵ[Ա]Ն ԵՒ Ի ՏԱՐ|ԻՆ :Ա: ԱՒՐ ԺԱՄ, ՆՈՐ
ԿԻՐԱԿԷԻՆ: Կ|ԱՏԱՐԻՉՔ ԳՐՈՑՍ Ա[Ի]Ր[Հ]Ն[Ե]Ա[Լ] ԵՂ|ԻՑԻՆ:

Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 33,

Դիտելիք. *Բնագրի սկզբում Եղիազարյանը կարդացել է* կամաւն այ. *մենք այն չենք տեսնում։ Առաջին տողում* Մխիթար որդի Արեւգ...ոնեաին *նույն վերծանողը գրում է.* եւ՝ Մխիթար եւ Գ· ·Ե-րին...։ Լաւ ընծայս *կարդացել է...* ընծայս, ի տարին՝ ի տարեներն։

*72. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արեւմտյան սյուները միացնող կամարի հյուսիսային հիմքի վրա, 10 տող.*



Ի ԹՈՒ⌊Ի⌋Ն⌋ ՈԾ⌋Զ (1207). ԵՍ՝ ԽԱ-
ԹՈՒ|ԹՍ ԵՒ ՈՐԴԻՆ ՄԽԻԹԱՐ :Խ:
ԴՈՒԿԱ|Տ ՑԵԿԵՂԵՑՈՅՍ ԳԱՒԻԹ||
ՏՈՒԱՔ, Վ⌈Ա⌉Ս⌈Ն⌉| ՄԵՐ ՀՈԳՈՅՍ
ՓՐԿՈՒԹԵ⌈ԱՆ⌉։ ԵՒ ԱՄԵՆ ՄԻ|Ա-
ԲԱՆՔՍ ՀԱ⌊Ս⌋ՏԱՏԵՑԱՔ Ի ՄԲ ԽԱ-
ՉԻՆ| ՈՒԹԱՒՐԷԱՑՔՆ :Բ: ԱՒՐ ԺԱՄ՝
ՁՄԻ ԱՒՐ՝Ն ՙՆՇԱ|Ծ՝Ն ԵՒ ՁՄԻ ԱՒՐՆ,
ԽԱԹՈՒԹԻ՝Ն Ա՝ՆՁԻ|ՆՋ ՑԻՇԱՏԱԿ։
ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԵԱ| ԼԻՑԻ ՑԱՑ,
ԽԱՓԱՆԻՉՆ ԴԱՏԱՊԱՐ|Տ⌈Ի⌉ՑԻ ՑԱՑ։

Դիտելիք. *Դժվար է հասկացվում, թե ում հիշատակին պետք է տրվեր պատարագներից առաջինը՝* զմի աւրն Նշանն և զմի աւրն Խաթունին։ *Հավանաբար* Նշան *տալով ուզում է հասկացնել, որ Մխիթար անունը արդեն նշվել է վերևում։*

*73. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արեւելյան պատին, արձանագրության աջ կեսը, 2 տող.*



. . . ՀԱՆԷ ԿԱՄ ՁԻՄ ԺԱՄՆ ԽԱ-
ՓԱՆԷ, ՆԶ⌈ՈՒ⌉ԼԵԱԼ ԵՂԻՑԻ ՅՍՑ ԵՒ
ՑԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ։

*74. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արեւելյան պատին, նախորդի տակ, 2 տող.*



ԱՀ։ ԵՍ՝ Խ⌈Ա⌉ՉԱՏՈՒՐ ԳՐԵՑ|Ի՝ ԿԻՐԱԿԷԻՆ ԱՒՐՆ ԵՐԿՈՒ ԺԱՄՆ ԳՐԻԳՈՐՈՅ՝ ՃՈՒՃԱՔԻՆ ՈՐԴՈՅՆ ԱՌՆԵՆ։

*75. ԳԱՎԻԹ. Ներքուստ, արեւելյան պատին, նախորդի տակ, 2 տող.*



ՄԽ⌈ԻԹԱՐ⌉ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՈՐ ՉՏԵՍԱՌՆԽԱՁՍ ԳՆԵՑԱՔ ԿՐԿԻՆ. ԱՌԱՋՆՈՐԴ, ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԳՐԻ|ՑՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԵՒ ԸՆԴ ՆԶՈՎԻՒՔ Է, ԹԷ ՁԱՌՆԷ։

Դիտելիք. *Բնագիրը անավարտ է, պահպանված մասից հասկացվում է, որ ոմն Մխիթար Գանձակեցի Հաղարծնի վանքի համար եա է գնել Տեառնենխաչ կոչվող հողամասը, հանդամասը կամ այգին, ըստ որում գնել է կրկին, այսինքն կալվածքը մի անգամ վաճառվել է և այժմ նորից է գնվել։ Հիրավի, սույն պրակի № 62 արձանագրից իմացանք, որ Վրաստանի Գեորգի Դ թագավորը, ի թիվս այլոց, Հաղարծնի վանքին է ամրացրել գրով նաև զՏենխաչը, որը գանվում էր վանքի և Միջնաշենի միջև։ Ահա այս Տեառնենխաչ դաշտամասն է, որ կրկին գնել և վերադարձրել է վանքին քննվող ընագրի հեղինակ Մխիթարը։*

*76.* **ԳԱՎԻԹ.** *Ներքուստ, հարավային սյուները միացնող կամարի վրա, 3 տող.*

--ԱԲՐԱՀԱ
---------ՊԱՏՄ-ԳԻՏԱՆԻՍ----ԱՆՑ
----ՅԱՍԱՅՈ-ԱԱՌՎԽԱՓՆԷՍՐԵՂԱՅՆ..ՍՄԱՀՄԱՄ

ԵՍ՝ ԱԲՐԱՀԱՄ . . . . . . . . ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻՍ . . . . . . . . .
ԻՎ ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱՑՆ . . . ԱԲՐԱՀԱՄԱ.. ԱՄԷՆ:

*77.* **ԳԱՎԻԹ.** *Ներքուստ, հյուսիսային պատին, լուսամուտից արևմուտք, 6 տող.*

ԵՍԱՇՈՒՆԵՒԱՄՈՒՍԻՆԻՄՏՎԱ
ՔՀՈԳՈՅԱՐԴԻՒՆՔՍԻՍԲԳՐԻԳՈՐՍ
ՄԻԱԲԱՆՔՍ:Բ:ԺԱՄՏՎԻՆ
ՄԵՋՍՐԲՈՅԽԱՉԻՆՈՒ
ԹԱՒՐԵՔՆՆԽԱՓԱՆ
ԱՌՆԷՆ

ԵՍ՝ ԱՇՈՒՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՏՎԱ|Ք ՀՈ|ԳՈՑ ԱՐԴԻՒՆՔՍ Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ|: ՄԻԱ-ԲԱՆՔՍ :Բ: ԺԱՄ ՏՎԻՆ|՝ ՄԵՋ ՍՐԲՈՑ ԽԱ-ՉԻՆ ՈՒ|ԹԱՒՐԵՔՆ. ԱՆԽԱՓԱՆ| ԱՌՆԵՆ:

Դիտելիք. *Նվիրատուի անունը՝* Աշուն *անծանոթ է հայ իրականությանը և այստեղ նրա առաջին վկայությունն է։ Բնագիրը նախկինում չի հրապարակվել և այդ պատճառով* Աշունը *չի մտել անձնանունների բառարանը։*

*78.* **ԳԱՎԻԹ.** *Ներքուստ, արևելյան սյուները միացնող կամարի վրա, արձանագրության բեկոր, մեկ տողով.*

ՍԲ ՄԱՍՆԱՊԱՀԱՆ . . ՍԲ ՄԱՍՆ Ա. ՊԱՀԱՐԱՆ . . . . .

*79.* **ԳԱՎԻԹ.** *Ներքուստ, առաստաղի հյուսիս-արևելյան անկյունում, մարդու բարձրաքանդակի շուրջը, 1 տող.*

ՋՍԻՄԷՈՆ ՄՆՄԵՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ

ԶՍԻՄԷՈՆ ՏՆՏԵՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ:

Հրատ. *Եղիազարյան, 1981, ԺԱ, 34։*

Դիտելիք. *Բարձրաքանդակը պատկերում է ձեռքին գդալ կամ շերեփ բռնած մի մարդ, որն, անշուշտ,* Սիմեոն *տնտեսն է, Հաղարծնի վանքի ծախսարարը, սակայն նրա գործունեության ժամանակն անորոշ է։*

80. ԳԱՎԻԹ. ներքուստ, [illegible] հյուսիս-արևելյան անկյուն, այլ մարդաքանդակի շուրջը, 2 տող.



ՊԱՏԿԵՐՍ ՀԱՒՐՆ| Է՝ ԴԱՆԻԼԻ: ՁԻՍ|
ՅԻՇԵՔ ԱՆՄՈՌԱՆԱԼ Ի| ՔՍ:

81. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, հարավային մուտքի ճակատակալի վրա, կամարի երկու կողմերում, 1 տող.

Ի ՁԼ ԹՎ⌊ԻՆ⌋ ՇԻ⌈ՆԵՑԱԻ⌉:



Հրատ. Եղիազարյան, 1954, ժ, 38։
Լուսանկ. 18

82. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, հարավային մուտքի ճակատակալին, 1 տող.

ՅՈՒ⌈ՍՈՎ⌉Ն ԱՅ, ՄԵՔ . . . ⌈ՄԻԱԲԱՆ⌉ՔՍ ՏՐ ՅՈՎ⌈ԱՆԷՍ⌉ ԵՒ ՏՐ ՄԱ⌈ՐԳ⌈ԻՍ⌉ ԸՍՏ ԿԱՐԻ ՄԵՐՈՒՄ ՍՊԱՍԱՒՈՐԵՑԱՔ ՍԲ ⌈ՈՒԽՏԻՍ⌉ ԵՒ ՄԵԾԱՒ ԱՇԽԱՏՈՒԹ⌈ԵԱՄԲ⌉ ՇԻՆԵՑԱՔ . . . ԴԵՁՆ ԵՒ ԱՅԼ ԲԱ⌈Ջ⌉ՈՒՄ ԱՐԴԻՒՆՍ: ԵՒ ՍԲ ԵՂԲԱՐՔՍ ՍԱՀՄԱ⌈ՆԵՑԻՆ ՉԿԻՐԱԿԷԻՑՆ ԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ Ի ՄԵՐ ԱՆՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՁՔՈ ԱՆԽԱՓԱՆ, ՄԻՆՉ Ի ԿԱՏԱՐԱԾ ՅԱՇԽԱՐՀԻ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Եղիազարյան, 1954, ժ, 38։
Լուսանկ. 18

Դիտողություն. *Ինչպես հասկանալ* ԻՁԼ թվ Շի *գրերը։ Անցյալ դարի ընդօրինակողները անտեսել են* Ի ՁԼ *գրերը և* թվ Շի *համարել եկեղեցու կառուցման տարեթիվ՝* ի թվին Շի= *1071թ.։*

*Հետագայում հայ ճարտարապետության պատմության գիտակ Ն. Տոկարսկին եկեղեցու դեղարվեստական-շինարարական ձևերի վերլուծության հիման վրա գտավ, որ հուշարձանը չի կարող XI դարի գործ համարվել և ավելի ուշ շրջանի կառուցվածք է, ուստի պահպանված գրերը պետք է վերծանել* Ի ՁԼ *(1281)* թվ[ին] շի[նեցաւ][1]: *Այս կարծիքի դեմ առարկում է հնագետ Հ. Եղիազարյանը Հաղարծնի վանքի մասին վերջերս գրած իր հոդվածում։ Այստեղ հեղինակը առաջարկում է եղած գրերը համարել երկու տարեթիվ՝* ի ՁԼ*=1281 թ և* թվ Շի*=1071 թ., ըստ այդմ ենթադրելով որ առաջինը՝ 1281 թ. եկեղեցու վերանորոգման թվականն է, իսկ երկրորդը՝ 1071 թ. նրա կառուցման։ Այս վարկածը հաստատելու նպատակով Եղիազարյանը մեջ է բերում մի շարք ապացույցներ, որոնցից ամենահիմնավորը, ըստ նրա, նույն մուտքի շրջանակին փորագրված արձանագրությունն է, որտեղ վանքի առաջնորդները՝ Յովանէսը և Սարգիսը հայտնում են* մեծաւ աշխատութեամբ վանքի սեղանատունը *կամ* տրապեզը *շինելու մասին։ Եվ քանի որ սեղանատան հարավային մուտքի բընագրից գիտենք, որ այն կառուցված է այդ շենքի կառուցմանը 1248 թ., ուստի Աստվածածին եկեղեցին չէր կարող 1281թ. շինված լինել, այլ պետք է գոյություն ունենար 1248 թ. շատ առաջ։*

---

[1] *Տե՛ս Н. Токарский,* Архитектура Армении, Ер. 1961. стр· 288—289.



*Հեղինակի այս կռվանը այնքան էլ հիմնավոր չէ։ Նախ՝ Յովանէսի և Սարգսի արձանագրության կարծեցյալ* արապեզը *չլինելու մասին, բնագիրը լիակատար ու հավաստի վերծանության չի ենթարկվում՝ շրջանակի հորիզոնական մասը եղծված լինելու հետևանքով։ Այն մասում, որտեղ պետք է լիներ կառույցի անունը, պահպանվել են բառավերջի 4 գրերը՝* ԴԵԶՆ: *Եղիազարյանը այստեղ վերականգնել է* զորապեզն, *բայց այդ դեպքում անբացատրելի է մնամ* դեզն *վերջավորությունը, որ ուրիշները համարում են* պարտեզն *բառի երկրորդ* եզրը՝ա>դ *ձայնեղացմամբ։*

Հարցի մանրամասն քննությունը այս պրակի նպատակներից դուրս համարելով, նշում ենք միայն, որ քանի դեռ հիշյալ բնագրում (№ 82) զտրապեզն վերականգնումը հավաստի չէ, հնարավոր չէ այդ հիմամբ որևէ եզրակացության հանգել։ Մի բան ակնհայտ է, որ այս արձանագրության մեջ հիշատակված Յովանէսը և Սարգիսը գործել են Աստվածածին եկեղեցու շինարարության ժամանակ, քանի որ հուշարձանի պատերին փորագրված №№ 84, 92, 97, 98, 99 նվիրագրերում նրանց նվիրատուները միջոցներ են հայթայթել եկեղեցու կառուցմանը նպաստելու համար, և բոլոր դեպքերում վանքի առաջնորդներ են հիշատակված Յովանէսը և Սարգիսը։ Մյուս կողմից բանասիրությանը հայտնի է, որ Հաղարծնի սեղանատունը կառուցել է վանքի առաջնորդ Յովանէս Արմանեցին (ըստ Կ. Գանձակեցու. Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի...), որը եպիսկոպոս էր ձեռնադրվել 1256 թ. և վերջին անգամ վկայված է Ն. Գետիկի վանքում թողած իր արձանագրում՝ (1260 թ.)։ Այստեղից ակներև է, որ սեղանատունը կառուցող Յովանէս Արմանեցին և Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակ վանքի առաջնորդ Յովանէսը տարբեր անձեր են, իրարից բաժանված շուրջ կես դարով։

Մեր կարծիքով քննվող գրերը Ի ՋԼ և թվ Շի հարկ է վերծանել այնպես, ինչպես պահպանվել է՝ Ի ՋԼ թվ[ին] շի]նեցեալ,] այսինքն եկեղեցին կառուցվել է 1281 թ. և այստեղ գործ ունենք նրա տարեթվի հետ։ Մոտավորապես նույն ձևով է փորագրված նաև Դեղձուտի վանքի գլխավոր եկեղեցու թվականը՝ ՉէՇ, որ ուսումնասիրողները անբրկբա վերծանում են՝ ի թվին Չէ (1258 թ) շ[ինեցաւ]։

**83. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, մուտքից արևելք, 5 տող.*



ԵՍ՝ ՅՈՀԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈ|ԿԵՑԻ ՄԻԱ.
ԲԱՆԵՑԱ ՄՔ ԱԾԱԾՆ|ԻՍ։ ՏՐ ՅՈՎԱՆԷՍ
ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Բ ՊԱՏԱՐ|ԱԳ Ի ՏԱՒՆԻ
ՅՈՎՀԱՆՈՒ ԷՏՈՒՆ| ԻՆՁ։

Հրատ. Տեր-Մովսիսյան, 79, Եղիազարյան, 1954 Ժ, 38,
Լուսանկ. 19

Դիտելիք. Առաջին տողում քահանա Պետրոկեցի Եղիազարյանը կարդացել է՝ Պետրակեցի։ Անձնանունը հավանաբար առաջանում է Պետրոսի, Պետրեի վանք տեղանունից, որ գտնվում էր Հաղարծնից ոչ հեռու, Ջուխտակ վանք հուշարձանախմբի մերձակայքում։ Նվիրագիրը ժամանակամերձ է եկեղեցու շինությանը (1281)։

**84. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, մուտքից արևելք, 6 տող.*



ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՍԱՀԱԿ ՁԻ|Մ
ՀՈԳՈ ԱՐԳԻՒՆՍ ԷՏՈՒ Ի ՇԻՆՈՒԹԻ[Ւ]Ն
ԱԾԱԾՆԻՍ։ ԵՊ[Ի]ՍԿՈՊ[Ո]ՍՍ՝ Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ
ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆ|ՔՍ ։Բ։ ՊԱՏԱՐ[Ա]Գ
Ի ՏԱՒՆԻ ՍԱՀՍԿԱ ՀԱՅՐԱ|ՊԵՏԻՆ ԺԱՄՆ
ԻՄ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ՑԵՏ ԻՄ ՄԱՀՈՒ| ԻՆՁ
ԱՌՆԵՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ։

Հրատ. Տեր-Մովսիսյան 79, Եղիազարյան, 1954, Ժ, 38,
Լուսանկ. 19

Գիտելիք. *Նվիրագիրը ժամանակամերձ է եկեղեցու շինությանը։ 2-րդ շարքում* եպոս ՙՎդ ՍԳ *հապավումները Եղիազարյանը վերծանել է* եպիսկոպոսք, վարդապետք, սարկաւագք, *որ ակնհայտ վրիպում է, ըստ որում վանքի անձնակազմի նույն անվանումը ըստ հիերարխիայի հանդիպում է նաև հուշարձանի №№ 97, 98, 99. 102 բնագրերում.*

**85. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *հարավային պատին, մուտքից արևելք, 5 տող.*

ՅՈՒՍՈՎՆԱՅՀԱՍԱԵՒԱՄՈՒՍԻՆԻՒՐԽՈՐԻՇԱՀՄԻ
ԱԲԱՆԵՑԱՆՍԲԱԾԱԾՆԻՍԵՒՍԲԳՐԻԳՈՐԻՍ:ՎԴՍ:ԵՄԱԲ
ԱՆՔՍԱՀՄԱՆԵՑԱՔ:Բ:ԱՒՐՊԱՏԱՐԱԳԻՏԱԻՆՅՈՎ:ԵՒ
..ԱԹԱՆԱԳԻՆԷ:Ա:ՀԱՍՆ:Ա:ԽՈՐՇԱՀԻԿԱՏԱՐԻՉՔ
-ՐՀՆՆՅԱՅ ՆԷ

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ՀԱՍԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՒՐ ԽՈՐԻՇԱՀ ՄԻ[Ա]ԲԱՆԵՑԱՆ ՙՍԲ ԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ։ Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏՔ[Ս] ԵՒ ՄԻԱԲ[Ա]ՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ :Բ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, Ի ՏԱԻՆԻ ՅՈՎ[ԱՆՆՈՒ] ԵՒ[ ԱԹԱՆԱԳԻՆԷ՝ :Ա: ՀԱՍԱՆԱ, :Ա: ԽՈՐԻՇԱՀԻ։ ԿԱՏԱՐԻՉՔ[ Ա]Ի[Ր]ՀՆԻՆ ՅԱՅ։ ԱՄԷՆ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 39,*
Լուսանկ. 19

**86. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, մուտքից արևելք, 5 տող.*

....ԱՐԳԻՍԵՒԳՐԻԳՈՐԵՂԲԱՐՔՄԻԱԲԱՆ
....ՍՏՐՏԻՐԱՑՈՒԱԾԱՏՈՒՐՎԴԵՒՄԲԱ
....ՍԱՀՄԱՆԵՑԱՔԻՏԱՆԻԷՓԷՍՈՍԻՍԲԺ
....ԱԳՍԻԱՒԳՐԻԳՈՐՈԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻ
ՐՀՆԻՆ ՅԱՅ

. . . . [Ս]Ա[Ր]ԳԻՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԵՂԲԱՐՔ ՄԻԱԲԱՆ[ԵՑԱՔ ՍԲ ԳՐԻԳՈՐԻ]Ս։ ՏՐ ՏԻՐԱՑՈՒ, Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐ Վ[Ա]Ր[Դ]Ա[ՊԵՏ] ԵՒ ՄԻԱԲԱՆ[ՔՍ] ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ի ՏԱԻՆԻ ԷՓԷՍՈՍԻ ՍԲ Ժ[ԱՄ] :Ա: Ս[Ա]ՐԳՍԻ, :Ա: ԳՐԻԳՈՐՈ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ Ա[Ի]ՐՀՆԻՆ ՅԱՅ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 39։*

Գիտելիք. *Բնագրի տողասկզբները մի քանի տառատեղ եղծվել են, չեն կարդացվում։ 2-րդ տողում* ՙՄծատուր ՙվդ *Եղիազարյանը վերծանել է* Մեծատուր, վարդապետ, *3—4-րդ տողերում* Եփեսոսի ՙսբ ժամ՝ Եփեսոսի սուրբ ժողովոյն, *ըստ որում եղծված մասում այդքան գրեր չէին տեղավորվի։ Անեծքի բանաձևը նույն վերծանողը կարդացել է.* կատարիչքն ուրհնեալ եղիցին յայ։

**87. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, 5 տող.*

---------ՄԻԱԲԱՆԵՑԱ-
ԾԱԾՆԻՍԵՒՍԲԳՐԻԳՈՐԻՍ
ՐՍԹՆՎԴԵՐՍԵՒՄԱԲԱՆՔՍ
ՍԱՀՄԱՆԵՑԱՔ.........
Ա.......:ՆԷ:.

. . . . ՄԻԱԲԱՆԵՑԱ[Յ] ՙԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ| . . . . Վ[Ա]Ր[Դ]Ա[ՊԵՏ]ԵՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԱՔ . . . . . . :| ԱՄԷՆ։

88. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *արտաքուստ, արևելյան պատին, 4 տող.*



. . . . . . ԻԽՐ ԱՂՈՒՏ ԵՒ ՈՐԴԻ .| .
. ՍԲ. ԳՐԻԳՈՐԻՍ: ՄԵՔ ՏՐ . . . . .| .
. ԵՑԱՔ ՈՐ ՍԲ ԳՐԻԳՈՐ . . . | . Ա
ԱՐՆԵՆ ԱՆԽԱՓԱՆ:

89. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *արտաքուստ, արևելյան պատին, նախորդից հյուսիս, 6 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱԾ, ԳՐԻԳՈՐ ԵՒ ԴԱՒ|ԻԹ ՄԻԱ-
ԲԱՆԵՑԱՆ ՍԲ ԱԾԱԾ⌈Ն⌉|ԻՍ ԵՒ ՆՈՅԱ
ԱՐԴԵԱՄՔ ԿԱԶՄԵՑԱՒ| ԶԳՄԲԵԹՆ։ ԵՍ՝ ՏՐ
Մ⌈Ա⌉Ր⌉Գ⌈Ի⌉Ս⌉ ՍԱՀՄԱՆԵՑ⌊Ի⌋| . . . . .
ՏՐ ՆՈՅԱ ՎԱԽՃ|ԱՆ . . . . ԿԱՏԱՐԻՉՔՆ
ԱԻՐՀՆԻՆ ՑԱՑ

Դիտելիք. *Նվիրագիրը ժամանակակից է եկեղեցու շինությանը։ Նվիրատուները վճարել են գմբեթի կառուցման ծախսը՝* նոյն արդեամբ կազմեցաւ զգմբեթն։ *Նվիրատվության այս ձևը լայնորեն դիտվում է Անիի և Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ հուշարձաններում (սույն պրակի №№ 5, 6, 11)։ 3-րդ շարքում* նոյն արդեամբ *վերջին բառում անտեսված է գործիական հոլովի* ք *հոլովակազմիչը՝* արդեամբք: *Չենք վերականգնում, քանի որ նման դեպքերը բազմաթիվ են և արտացոլում են խոսակցական լեզվում այդ հոլովակազմիչի ձևաբանական նշանակության մթագնումը, նրա անցումը նախորդ մ-ին։*
*3—4-րդ շարքերում* կազմեցաւ զգմբեթս զ *նախդիրը անհարկի է գործածված, հավանաբար բնագրի հեղինակը փորագրել է* կազմեցին զգմբեթն *կառուցվածքի հետևությամբ։*

90. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *արտաքուստ, արևելյան պատին, 5 տող.*



ՅՈՒՍՈՎՆ ԱԾ, ՎԻՐԱ⌈Պ⌉| ՅՈՎ⌈ԱՆԷՍ⌉ ՄԻԱ-
ԲԱՆԵՑԱՆ . | ⌈ՏՐ⌉ ՅՈՎ⌈ԱՆԷՍ⌉ ԵՒ ՏՐ Մ⌈ԱՐ⌉-
Գ⌈ԻՍ⌉ ԵՒ ՄԻԱԲ⌈Ա⌉Ն⌈ՔՍ⌉| ՏՎԻՆ ։Բ։ ԱԻՐ ԺԱՄ։
⌈ԿԱՏ⌉ԱՐԻՉՔՆ ⌈ԱԻ⌉ՐՀ⌈ՆԻՆ ՑԱՑ⌉։

91. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *արտաքուստ, արևելյան պատին, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱԾ, ԵՍ՝ ԱՊ . . ԱՓՍ ԵՒ ԱՄ|ՈՒ
ՍԻՆ ԻՄ ՄԱԽԱ . . . . ՄԻԱԲԱ⌊Ն⌋ԵՑԱՔ
ՍՐԲՈՑՍ ԵՒ Ս⌈Պ⌉Ա⌉ՍԱՒՈՐՔ ՈՈՐԱ| . . ՑԻ
. . . . . . . ՔԻ ԱՄԷ⌈Ն⌉| . . . . . . .
ԿԱՏԱՐԻՉՔՆ| ԱԻՐՀՆԻՆ ՑԱՑ։

*92.* ***ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, արևելյան պատին, հարավային խորշի մոտ, եղծված, 2 տող։*



ՍԻՐՈՎՆ ⌜Ա̅Յ⌝, ԵՍ՝ ՅՈՎ⌜ԱՆԷՍ⌝ ՔԱՀԱՆԱ Ի Ս̅Բ ՈՒԽՏԷՍ ԿԷՉԱՌԻՒԱ⌜Ց⌝ . . . ԲԱ ԵՒ ԿԱՐԳԻՍ . . . Վ⌜Ա⌝Մ⌜Ն⌝ ԻՄ ԵՏ⌜ՈՒ⌝ Ա|ՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻ⌜ՒՆ⌝ Ա̅ԾԱԾ⌜Ն⌝ԻՍ։ ՄԵՔ ԵՊ⌜Ի⌝ՍԿՈՊՈ⌝Ս Վ⌜ԱՐ⌝Դ⌜Ա⌝ՊԵՏ⌝ . . . Տ̅Ր Ս⌜ԱՐ⌝Գ⌜Ի⌝Ս⌝ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑ⌜ԱՔ⌝ . :

*93.* ***ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, գմբեթի թմբուկի արևմտյան երեսին, 1 տող.*

 . . . ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱ⌜ԲԱՆՔ⌝ . .

*94.* ***ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ,*** *արտաքուստ, գմբեթի թմբուկի վրայի խաչաքանդակին, 1 տող.*



ԳՐԻԳՈՐՈ Է ԽԱՉՍ։

*Հրատ. Եղիազարյան, 1954, ժ. 39։*

*95.* ***ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, արևմտյան պատին, հարավային անկյան մոտ, վերևում, 6 տող.*



ԵՍ՝ ԹԻՓԼԻԶԵՑԻ ՁԻԹԱՂԻ ՈՐԴՈՑ ԹԱՂՈՑ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՍՈՒԼ|ԽԱՆՍ ԵՒ ԵՂԲԱՑՐՆ ԻՄ ՁԱԼՆ ԵՒ ՄԵՐ ՈՐԴԻՔՆ՝ ՍՏԵՓԱՆՈՍՆ ԵՒ ԹԱԴԻՆ|, ԵՒ ՓԱՀՐԱՊԱՏԵՑԻ ԽՕՋԱՑԳՈՒԼԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆ ՑԱՐՈՒԹԻ⌜ՒՆ⌝ ՄԵԾԱԻ| ՅՈՒՍՈՎ ԱՌ Ք̅Ս ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ԶԽԱՂԱՐԾՈՒՈՑ ԶԵԿԵՂԵ|ՑԻՍՆ՝ ԶՍ̅Բ ԱԾԱԾՆԻՆ ԵՒ Ս̅ԲՑՆ ԳՐԻԳՈՐԻՆ, ՑԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ՀԱՄՕ|ՐԷՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՄԵՐՈՑ։ Ի ԹՎԻՆ ՀԱՑՈՑ ՌՃԼ (1681)։

*Հրատ. Ջալալյանց, Ա. 136, Բարխուդարյանց, 365 ՎՏ, 194, Տեր-Մովսեսյան, 79, Եղիազարյան, 1954, ժ 39։*

Գիտելիք. *Հաղարծնի վանքի ս. Գրիգոր և Աստվածածին եկեղեցիների վերստին նորոգումը ըստ այս բնագրի տեղի է ունեցել 1681թ., Թիֆլիսաբնակ Ջիթաղլանների և փահրապատեցի Խոջագուլի միջոցներով։*

*4-րդ տողում* Նորոգեցաք զԽաղարծուոյ զԵկեղեցիսն, *վանքի անունը փոխագրված է* ճ>խ *անցումով, որ գիտվում է արդի մի քանի բարբառներում (Վան, Ջուղա, Շատախ և այլն)։*

**96. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *ներքուստ, հարավային պատին, 3 տող.*



ՇՆՈՐՀԻՒՆ Ա̅Ց̅. ԵՍ՝ ԲԷԿՍ, ՈՐԴԻ ԱՇՈՏՈ ՑԱԶԳԷ ՀԱՐԲԱՆՑ| ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԲՈՐԻՆԱ ԵՒ Ե⸢Ղ⸣ԲԱՅՐ ԻՄ ՍՄԲԱՏ ՄԻԱԲԱՆԵՑ|ԱՔ Ի Ս̅Բ̅ ՈՒԽՏՍ, ՈՐՊԷՍ ԵՒ ՀԱՅՐՆ ԻՄ ԵՒ ՏՎԱՔ ԱՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆ⸢ՈՒԹԻՒՆ . . .⸣:

*Հրատ. Բարխուդարյանց, 365, Տեր-Մովսիսյան, 79, Եղիազարյան, 1954, ժ. 40,* Լուսանկ. 20

Դիտելիք. *Նվիրագիրը ժամանակամերձ է եկեղեցու շինությանը։ Բնագիրն անավարտ է մնացել, պակասում է հատուցման բանաձևը, արդարև եղած տառաշարքերից չի հասկացվում, թե նվիրատուներ Բէկն ու իր ամուսին Բորինան ինչ հատուցում պետք է ստանան վանքից՝ իրենց տված արդյունքների դիմաց։ Պետք է ենթադրել, որ Աշոտի որդի Բէկը եղել է Հաղարծնի վանքի հովանավորներից մեկը։*

**97. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *ներքուստ, հյուսիսային պատին, 3 տող.*



ՍԻՐՈՎՆ Ա̅Ց̅. Ա⸢ՍՏՈՒԱ⸣Ծ⸢ԱՄ⸣ԵԾԱՐ ՊԱՐՈՆՆ ՀԱՍԱՆ . . . . Ո ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻ ՄԵԾԱՒ ԱՐԴԵԱՄԲ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԻՒՐՈՑ ՄԻԱԲԱՆԵՑ|ԱՒ Ս̅Բ̅ ԱԾԱԾՆԻՍ ԵՒ Ս̅Բ̅ ԳՐ⸢Ի⸣ԳՈՐԻՍ, ՈՐՊԷՍ ԵՒ ՆԱԽՆԻՔ ԻՒՐ։ ԵՒ ՄԵ⸢Ք⸣՝ Տ̅Ր̅ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ Տ̅Ր̅ Ս⸢ԱՐ⸣Գ⸢ԻՍ⸣Ն Վ⸢ԱՐ⸣Դ⸢Ա⸣ՊԵՏ⸣ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ՋԱՏԿԻՆ ՃՐԱԳԱԼՈՒ⸢Ց⸣ԻՆ ԵՒ ԿԻՐԱԿԷԻՆ ՊԱՏԱՐԱԳՆ ՀԱՍԱՆԱ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ, ԶԱՄԵՆ ⸢ԵԿԵՂԵ⸣ՑԻՔՍ ԱՆԽԱՓԱՆ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ⸢Ն⸣ԻՆ Ի Տ̅Է̅։ ԵՒ ԽԱՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻՆ Յ̅Ա̅Ց̅։

Դիտելիք. *Ինչպես նշել ենք, այս նվիրագիրը վերաբերում է Աստվածածին եկեղեցու շինության ժամանակներին, տեր Յովանէսի և վարդապետ Սարգսի վանահայրության տարիներին։ Պարոն Հասանը, իր նախնիների նման, Հաղարծնի վանքի հովանավորողներից է եղել* XIII *դարի վերջերին։*

**98. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *ներքուստ, հարավային ավանդատան մուտքի խորշի մոտ, 7 տող.*



ՍԻՐՈՎՆ Ա̅Ց̅, ՄԻԱԲԱՆԵՑԱՒ| Ս̅Բ̅ ՈՒԽՏԻՍ ԱՂԱԽԻՆ ՔԻ ՄԻՆ|ԱՑՆ ԵՒ ԵՏ ԱՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻ⸢Ւ⸣Ն⸣| ՍԲ ԱԾԱԾՆԻՍ։ ԵՒ ՄԵՔ՝ Տ̅Ր̅ ՅՈՎ⸢Ա⸣ՆԷՍ⸣|, ՍԱՐԳԻՍ Վ⸢ԱՐ⸣Դ⸢Ա⸣ՊԵՏ⸣ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔՍ ՏՎԱՔ| ՆՄԱ .Գ. ՊԱՏԱՐ⸤Ա⸥Գ, Ի ՏԱՒՆԻ ՎԱՐԴԱՆԱ|ՆՑ՝ :Ա: ՎԱՐԴԱՆ⸤Ա⸥, :Ա: ՄԻՆԱՒ, :Ա: ՆՈՒՐՆՈՐԻ։

Դիտելիք. *Բնագիրը ժամանակակից է եկեղեցու շինությանը։* Միհայ *իգ. անձնանունը (ըստ Հր. Աճառյանի պարս.* mina- մանրանկարչություն *բառից, հատ. Գ, էջ 336) հաճախ է հանդիպում* XII—XIV *դարերի վիմագրերում։* Նուրնոր *անունը անծանոթ է հայ իրականությանը, հավանաբար ծագում է արաբ.* nūr-լույս *և հայ.* նոր *բառերից,* նոր լույս *նշանակությամբ։*

**99. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *Ներքուստ, հարավային պատին, 4 տող.*



ՅՈՒՍ[ՈՎ]Ն ԱՅ, ՄԵԾԱՀԱՒԱՏ ՊԱՐՈՆ ՍՄԲԱՏ, Ո[Ր]Դ[Ի] ԱՇ[ՈՏ]Ի ՄԻԱԲԱՆԵՑԱՒ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ, ՈՐՊԷՍ ԵՒ Ծ[Ն]ՈՂՆ ԻՒՐ, ԵՒ ԵՏ ԱՐԴԻՒՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻ[Ւ]Ն[Ս] ԱԾԱԾՆԻՍ ՄԵՔ՝ ՏՐ ՅՈՎ[Ա]ՆԷՍ[Ս], ԵՒ ՏՐ Ս[Ա]Ր[Գ]Ի[Ս] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ ՆՄ[Ա] Ա ՊԱՏԱՐԱԳ ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ, ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ, ՄԻՆՉ Ի ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ։ ՈՎ[Ք] ԽԱՓԱՆԷ, ԴԱ[ՏԻ] Ի ՏԷ, ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ՍԱՏԱՆԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։

Լուսանկ. 20

Դիտելիք. *Նվիրատվությունը կատարվել է եկեղեցու կառուցման ընթացքում։* Մեծահավատ պարոն *Սմբատը հավանաբար № 96 արձանագրության մեջ հիշատակված Աշոտի որդին է, Հաղարծնի վանքի հովանավոր իշխաններից մեկը։*

**100. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *Ներքուստ, հարավային ավանդատան պատին ներքևից, 6 տող.*



[Կ]ՆԱՄԱՒՆ ԱՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՍԲ ԱԾԱԾՆԻ[Ս] ԵՒ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ԱՄՈՒՍ[Ի]Ն ԻՒՐ ԽԱԹՈՒՆ ԵՏՈՒՆ ԱՐԴԻՒՆՍ Ի[Ն]ՈՐՈԳՈՒ[Թ]Ի[Ւ]Ն ՍԲՈՒՍ։ Ս[Ա]ՐԳԻՍ[Ս] Վ[Ա]ՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ Ի ՏԱՒՆԻ ԴԱՒԹԻ[Ն] ԵՒ ՅԱԿՈԲԱ [Բ] ԺԱՄ[Ս] ՏՎԱՔ՝ Ա ՄԱՐՏԻՐՈՍԻ[Ն], Ա ԽԱԹՈՒԹԻ։ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ[Ն]ԻՆ[Ս] ՅԱՅ։

Դիտելիք. *Նվիրատուները տրդունքներ են տվել* ի նորոգութիւն սրբուս, *որից չի հասկացվում թե որ եկեղեցու նորոգմանն է վերաբերում խոսքը, ըստ որում նրանք միաբանել են և՛ Աստվածածնին և՛ ս. Գրիգորին։ Հավանական է թվում, որ խոսքը ս. Գրիգոր հին եկեղեցու նորոգման մասին է։ 5-րդ շարքում* տվաք *բառից առաջ պետք է լիներ տրվելիք պատարագների ընդհանուր քանակը, ելնելով շարունակությունից վերականգնում ենք.* :Բ: ժամ *(կամ* աւր*)։*

**101. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *ներքուստ. արևմտյան պատին, արձանագրության բեկոր, 3 տող.*



[Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ] ՅԱԿՈԲԱՅ|. ԵՒ Ի Թ[ԱԳ]Ա[ՒՈՐՈՒԹԵ[ԱՆ]Ն| Պ[ԱՐՍԻՑ Շ[ԱՀ ՍՈՒԼ[ԷՄԱՆԻՆ] . . . .

**101ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *ներսում, բեմին ընկած գեղաքանդակ խաչքարի բեկորի վրա, Քրիստոսի բարձրաքանդակի վրա պատկերված պնակիտին, 3 տող.*




ԵՍ ԵՄ ՔՐԻՍՏՈՍ ՄԻԱԾԻՆ

**102. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, 5 տող.*




ՍԻՐՈՎՆ ԱՑ, ՄԻԱԲԱՆԵՑ . . . . .
[ՄԱ]ՐԻԱՆԷ: ՏՐ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՏՐ ՍԱՐԳԻՍ
[ԵՏՈՒՆ . . ՊԱ]ՏԱՐԱԳ ՋՏԱՒՆԻ ԳԱԼՍ-
[ՏԵԱՆ] . . . . [Կ]ԵՆԴԱՆԻ ԵՆ ԻՒՐԵՆՑ
ԾՆՈՂԱՑՆ . . . . [ՈՎ ԽԱՓԱՆԷ],|:
ՆԱՑԱՆ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

*Հրատ. Եղիազարյան, 1954, Ժ, 39։*

Դիտելիք. *4-րդ տողում* իւրեց *բառն արտացոլում է* ծա *երկբարբառի, պարզում* Ն *ձայնավորի, որ տարբեր գրքերում հաճախ է դիտվում XII—XIV դարերի վիմագրերում։ 5-րդ տողում* նացան *փորագրված է գրաբարի* Նոցա *ձևի փոխարեն և արդյունք է* ա *ձայնավորի ռնգացման, որ դիտվում է նաև միջին հայերենի գրական հուշարձաններում և այլ վիմագրերում։*

**103. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, մուտքի կամարի վրա, 2 տող.*

ԵՍ՝ ՅՈՎԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ԸՆԾԱ ԷԲԵՐԻ ՍՔ ԳՐԻԳՈՐԻՍ ԸՍՏ ԿԱՐԻ [Ի]ՄՈՒՄ: ՀԱՅՐ ՅՈ[Վ]Ա[ՆԷՍ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ԷՏՈՒՆ ԻՆՁ .Բ. ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻՆ ՅՈՎԱՆՈՒ|:
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՑ:

*Հրատ. Ջալալյանց, Ա, 134, Սմբատյանց, 182, ՎՏ, 38 Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ԺԱ, 34։*

Լուսանկ. 21

**104. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, մուտքի բարավորի վրա, 8 տող.*

Ի ԹՈՒ[Ի]Ն՝ ՈԽԳ (1194). ՅԻՇԽԱ|ՆՈՒԹԵ[Ա]Ն ԻՒԱՆԷԻ ԵՒ ՅԱՌ|ԱՋՆՈՐԴՈՒԹԵ[Ա]Ն ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐ|ԴԱՊԵՏԻՆ ԵՍ՝ ԽԱՂԹ ՀԱՐԲԱ ՈՐԴԻ ՇԻՆԵՑԻ| ԶԵԿԵՂԵՑԻՍ ՎԱՍՆ

ԻՄ ՀՈԳՈՑՍ ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ]: ԵՒ ԱՄԵՆ[Ն] ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՑԱՑՏՆՈՒԹԵ[ԱՆ] ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ ԺԱՄՆ[Ն] ԻՆՁ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ ԵՒ ՁՁԱՏԻԿՆ՝ ՄԼՔՔԱՆԱ, ՈՐ ԱՆԽԱՓԱՆ ԱՌ[Ն]ԵՆ: ԿԱՏԱՐԻՉ[Ք]Ն ԳՐՈՑՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԼԻՑԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 134, Սմբատյանց, 182, ՎՏ, 38, Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ԺԱ, 34։ Լուսանկ. 21, 22



Դիտելիք. Եկեղեցին կառուցվել է Խաչատուր վարդապետ Տարոնացու առաջնորդության ժամանակ (1194 թ.)։ Բարխուդարյանցը բնագրի թվականը կարդացել է ՈՂԳ=1244, ըստ այդ եկեղեցու կառուցումը և կառուցողների ժամանակագրությունը հիմնվել է այդ թվականի վրա։ Նվիրատուի անունը Հր. Աճառյանը հանում է արաբ. xalat- պատվի հագուստ բառից, ենթադրելով թե բնագրի խալը-ը կարող էր առաջանալ խալաթ-ից, երկրորդ ա-ի սղումով, որ քիչ հավանական է, ըստ որում այդ շեշտակիր ա-ն հազիվ թե հնչյունափոխվեր։ Հավանաբար այս ստուգաբանության համար հիմք է ծառայել նաև Բարխուդարյանցի վերծանությունը, որտեղ անձնանունը խալաթ է։ 7-րդ տողում Մլքքանա (Մլքան, Մլքքան) անունը Եղիազարյանը վերծանել է Մամքանա։ Մլքան ձևը ըստ Հր. Աճառյանի ենթադրում է արաբ. mulūkan-թագավորների պսակ նախաձև, մինչդեռ Մամքան բուն հայկական ծագում ունի, մամ բառից, քան վերջավորությամբ (հմմտ. Պապքան, Ռուզուքան, Գուլքան, հատ. Գ, էջ 187, 364)։

**105. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ**. *արտաքուստ, արևմտյան պատին, 6 տող.*



⌈ԵՍ⌉ ԳՐԻԳՈՐ ԿԱՊԱԼԵՑԻ ՄԻԱԲԱՆԵՑ|⌈Ա⌉Ց Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ: ԵՒ| Վ⌈Ա⌉Ր⌉Դ⌈ԱՊԵՏ⌉ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ⌈ՍԱ⌉ՀՄԱՆԵՑԱՔ :Ժ: ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՆԱԻԱԿԱՏԵԼԱ⌉Ց| ⌈ԽԱ⌉ՉԻՆ, :Բ: ԹԱՄԱՐԻՆ ԵՒ ՋԱՑԼՆ ԳՐԻԳՈՐ|⌈ԻՆ⌉: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 35:
Լուսանկ. 23

Դիտելիք. *Գրիգոր Կապալեցին տեղական մեծահարուստ իշխաններից է, բացի այս բնագրերից նա հիշատակվում է նաև իբրև Ն. Գետիկ վանքի ս. Գրիգոր եկեղեցու շինարարությունն ավարտող, Կ. Գանձակեցու «Պատմության մեջ»: Այստեղ վկայված վարդապետ Յովանէսը, անշուշտ, Հաղարծնի վանքի նշանավոր առաջնորդ Արմանեցին է, որ վանահայր է եղել նաև Ն. Գետիկում և Հաղբատում:*

**106. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հյուսիսային պատին, խորշի մեջ, 3 տող.*



ՇՆՈՐՀԻԻՆ ԱՑ, ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ, ՈՐԴԻ ԱԻՇԻՆԻ ԵՏՈՒ ԱՐԴԻԻՆՍ Ի ՍԱԼԵԼ ՋՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ, ՑԻՇԱՏԱԿ Վ⌈ԱՐ⌉Դ⌈ԱՊԵՏ⌉ԱՑ ԻՄՈՑ՝ ԲԱՐՍՂԻՆ ԵՒ ԱՆԴՐԻԱՍԻՆ: ՏՐ Յ⌈Ո⌉Վ⌈ԱՆԷՍ⌉,| Ս⌈ԱՐ⌉Գ⌈ԻՍ⌉ Վ⌈ԱՐ⌉Դ⌈ԱՊԵՏ⌉ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ .Բ. ՊԱՏԱՐԱԳ ԼՏՈՒՆ Ի ՏԱԻՆԻ ՊԱՐՍԱՄԱ⌈Ց⌉Ի, Ա. ԲԱՐՍՂԻՆ, Ա. ԱՆԴՐԻԱՍԻՆ:

Հրատ. Տեր-Մովսիսյան, 79, Եղիազարյան, 1954, ԺԱ, 35,

Դիտելիք. *2-րդ տողում* յիշատակ վ̅դաց իմոց *Եղիազարյանը վերծանել է* յիշատակ ոյգիաց իմոց, *որ չի համապատասխանում քարի վրա փորագրվածին, քանի որ այնտեղ վ̅դաց հապավումը պատիվ-գծիկ ունի:*

*2—3-րդ տողերում սովորական* տր ՅՎ ՍԳ ՎԴ և միաբանքս *նույն վերծանողը կարդացել է.* տէր Յովաննէս վարդապետի եւ միաբանքս, *որ հեռու է իրականից և անկապ: Վերջին տողում* ի տաւնի Պարսամաի Ա. Բ ս. *Ա Անդ կարդացվել է.* ի տաւնի Պարսամա Արսաս Անդրիասի, *ըստ որում* Բարսղի *անվան փոխարեն վերականգնվել է* Արսա:

**107. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հյուսիսային պատին, 4 տող.*



ՍԻՐՈՎ Ն⌈ԱՑ, ԵՍ՝ ՅՈՀԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՍ: ԵՒ ՄԻԱԲԱՆ|ՔՍ ԼՏՈՒՆ Ի ⌈ՏՕՆԻ⌉ :Ա: ՊԱՏԱՐԱԳ, Ի ՏԱԻՆԻ Դ|ԱԻԹԻ ԵՒ ՅԱԿՈԲԱ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ⌊Ի⌋ ՏԷ:

Հրատ. Տեր-Մովսիսյան, 79, Եղիազարյան, 1954, ԺԱ, 35,

**108. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հյուսիսային պատին, լուսամուտից ներքև. 3 տող.*



ԱԻՐՀՆԵԱԼ Է ԱԾ ՑԱՄԵՆԱՑՆ ԱՐԱՐ|ՈՑ: ԱԾ ՈՂՈՐՄԻ ՀԱՑՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԽՈՑ|ԱԴԵՂԻՆ: ԱՄԷՆ:

Հրատ. Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ԺԱ, 35,

**109. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատի մեջ ագուցված խաչքարի ընկորի վրա, 2 տող.*




. . . ՈՐՔ ԵՐԿՐՊԱ|ԳԷՔ, ԶՍԱՐԳ[Ի]Ս ՑԱՂԱԻԹ[Ս] ՅԻՇԵՑԷՔ[Ի]:

*Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 36։*

**110. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ, հարավային պատին, 11 տող.*



Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՌՃ ԻՆ (1651), Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵ[Ա]Ն[Ն] ՊԱՐՍ[Ի]Ց ՇԱՀ ՍՈՒԼԷՄԱՆԻՆ ՈՐ|ԴՈՅ ՓՈՔՐ ՇԱՀԱՊԱՍԻՆ ԵՒ ՏԷ[Ր]ՈՒԹԵԱՆ . . . . . Ս ԻՇԽԱՆԻՆ ԵՒ ՄԷԼԻՔՈՒԹԵԱՆ| ՊԱՐՈՆ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏ[Ո]ՒԹԵԱՆ ՅԱԿՈԲԱ[Յ] ՋՈՒՂԵՑՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐ|ԴՈՒԹ[Ե]ԵԱՄ[Բ]ԲՆ ՏԲ ՈՒԽՏԻՍ ՅԱԿՈԲ ԵՊ[Ի]Ս[Կ]ՈՊ[Ո]ՍԻ, ՊԵՏՐՈՍ ԱՇԱԿԵՐՏԻ, ՆՈՐԻՆ|: ՈՂՈՐՄՈՒԹ[Ե]ԵԱՄ[Բ]ԲՆ ՅԱՑ, ՄԵՔ՝ ՑԵՏԻՆՔՍ ԿՐՕՆԻՑ ԹԻՓԼԻԶԵՑԻ ՀՈԳԻՋԱՆԻ ՈՐԴԻՔՍ՝ ՊԱ|ՐՈՆ ՊՐԱՊՈՍ, ՄԽԻԹԱՐՍ, ՍԱՓԱՐՍ ԵՒ ԶԱԼԻՍ ԵՒ ՈՐԴԻՔՆ ՄԵՐ՝ ԳԱՍՊԱՐՆ, ՀՈԳ[Ի]ՋԱՆՆ|, ԲԱՂՏԱՍԱՐՆ ԵՒ ՄԷԼՔՈՆՆ ԶՄԵՐ ՀՈԳՈՑ ԱՐԴԵԱՄՔՆ ՆՈՐՈԳԵՑԱ[Ք]Ք[Ն] ԶՏԲ| ՍՏԵՓԱՆՈՍՍ, ՈՐ ՅՈՅԺ ԽԱԽՏԵԱԼ ԷՐ, ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹ[Ե]ԵԱՆ[Ն] ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԵՐԿԱՐ|ՈՒԹԵ[Ա]Ն[Ն] ԿԵՆԱՑ ՈՐԴՈՑ ՄԵՐՈՑ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍՈՐԱՑ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԵ[Ա]Ն ԵՒ ՅԱՐ|ՈՒԹԵ[Ա]Ն[Ն] ՊԱՏԱՐԱԳՆ ԶՄԵԶ ՅԻՇԱՏԱԿԵԼ: ԵՒ ՄԵՔ ԽՈՍՏԱՑԱՔ, ՈՐ ԶԿԱՆԹԵՂ ՍՈՐԻՆ ՄԻՇՏ Ի| ՎԱՌ ՊԱՀԵԼ, ՈՐԴՒՑ ՈՐԴԻ: ԿԱՏԱՐՕՂՔՆ ՕՐՀՆԻՆ ՅԱՑ: ԱՄԷՆ:

*Հրատ. Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1954, ԺԱ, 35։*
*Լուաճկ, 25*

Դիտողություն. *Ինչպես նշել ենք Կունեն գյուղատեղի Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրության մեկնաբանության մեջ (№ 348), այս բնագրի թվականը ճշգրտման կարիք ունի.*

ՌԾ=1631 *թվականը չի համապատասխանում Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության տարիներին, քանի որ նա հայոց հայրապետ է դարձել 1655 թ. և հովվել մինչև 1680 թ.։ Մյուս կողմից, հայտնի է նաև, որ Պարսից Շահ-Սուլեյմանը գահակալել է 1666—1694 թթ., որը ևս անհամաձայն է քննվող բնագրի 1651 թվականին։ Այստեղից, հավանական է թվում թվականը վերականգնել ՌԾԻ—1671. ենթադրելով, որ բնագրի ՌԾ-ին գրերի* ի-ն *սխալմամբ փորագրվել է վերջամասնիկի մեջ* (ին) *և ոչ թե* Ռծ-ին *կից։*

*4-րդ շարքում* Պետրոս աշակերտի որին *Եղիազարյանը վերծանել է* Ես տէր Պետրոս աշակերտի որին, *անտեսելով, որ բնագրի հեղինակը* Պետրոսը *չէ, այլ՝* մեք յետին գոլով կրօնից *և այլն։*

*5—6-րդ տողերում* պարոն Պրապօս, Հազիջան *վերծանվել են՝* պարոն Պապօս, Հոզաջան։

*7-րդ տողում* արդեամքն *բառը Եղիազարյանը կարդացել է* արդեամբքն, *մինչդեռ քարի վրա* ք *հոլովակազմիչ չկա, սույն պրակի № 89 բնագրի մեկնության մեջ հիշատակված օրինաչափությամբ։*

***111. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հարավ, 4 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՄԱՐԳ⌈ԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ⌉| ՆԱՆԱ ՄԻԱԲԱՆԵՑԱ⌈Ք ՆՈՒԱ⌉ՍՏ ԱՐԴ|ԵԱՄԲՔ ԻՄՈՎ։ ՍԱՐԳԻՍ Վ⌈ԱՐ⌉Դ⌈ԱՊԵՏ ԵՒ ՄԻԱԲԱ⌉ՆՔՍ Է|ՏՈՒՆ :Բ: ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ⌈ԱԾԱԾ⌉ՆԻՆ։

Հրատ. Եղիազարյան, 1954. ժԱ, 35։

Դիտելիք. *Նվիրատուի անունը Եղիազարյանը կարդացել է* Արզ..., *հավանաբար չնկատելով* Ա-*ի վերի հորիզոնական գծիկը։ 2—3-րդ տողերում* Նուաստ արդեամբք *վերծանվել է* սուրբ ուխտս արդեամբք, *ըստ այդմ եղծված մասում այդքան գրեր չեն տեղավորվի։*

***112. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, արևմտյան պատին, մուտքից հարավ, 7 տող.*



⌈ՑՈՒՍՈՎՆ ⌈ԱՅ⌉ . . . ⌈ԵՒ| Ա⌉ՄՈՒՍԻՆ ԻՄ Տ . . . . | ԱՔ ԻՄ ԱԾԱՏՈՒՐ . . . . . Ա ՁՄԵՐ ՀՈԳՈ ⌈ԱՐԴԻՒՆՍ ԸՆԾԱ|Ց⌉ԵՑԱՔ Ի ՇՆՈՐՀ⌈ՈՒԹԵ⌈ԱՆ⌉ . . . . . . . . . | Ի ՏԱՒՆԻ ԲԱՐՍԵՂԻ. ⌈ՈՎ ԽԾ⌉ԱՓԱՆԷ, ԴԱՏԻ Ի ՏԷ։

***113. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ.*** *արտաքուստ, արևելյան պատի հարավային անկյուն, 4 տող.*



ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵՍՑԻ| ԱԲԱՍԱՁՈՐՈ ՔԱՐ| ՀԱՏՍՆՈՑՆ, ՈՐ ՁՏՆԵՐՈՑՍ ՏԵՂՍ ՀԱՏԻՆ։

Հրատ. ЭВ
Լուսանկ. 24

Դիտելիք. *Աբասաձորը Ն. Գետիկի վանքից ոչ հեռու գտնվող այն գյուղն է, որը Բարդեան և Տանձուտ գյուղերի հետ միասին Վրաստանի Գեորգի Գ թագավորի գրով 1184 թ. հաստատվել էր*

իբրև Հաղարծնի վանքի անխախտելի սեփականություն (տե՛ս սույն պրակի № 62)։ Բաց դեղնագույն ծակոտկեն քարի հանքը, որտեղից բերվել են Հաղարծնի վանքի շինությունների քարերը, գտնվում է վանքից մոտ 1 կմ հյուսիս-արևմուտք։ Սույն բնագրով բարեխոսվում են ոչ թե վանքի շենքերի, այլ Աքասածոր գյուղի այն քարհատները, որոնք հատել են վանքի շինությունների տեղը, հիմքը։ Քարհատանոց քարհատ-անի հոգնակի ձևի սեռական հոլովն է, որ անհարազատ է ժամանակի գրաբարին և գալիս է միջին հայերեն բարբառներից, որտեղ անի, ենի հոգնակերտները լայն կիրառություն ունեին։ Միջին հայերենի օրինաչափություններով է վկայված նաև անձրոյս բառը, որի փոխարեն սպասելի էր՝ տանց(<տունք):

**114 ՍԵՂԱՆԱՏՈՒՆ.** *Ներքուստ, կամարի վրա, 1 տող.*

ՄՈՒՍԷՍ ՅԱՂԱ.....   ՄՈՒՍԷՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

**115. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ** *ներքուստ. Երդիկի նիստի վրա, վերից վար.*



ՄԻՆԱՍ

**116. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ.** *Ներքուստ, արևմտյան երդիկին կից թաղի վրա, 3 տող.*

ԶԳՐԻԳՈՐԻ<br>ՍՎԱՐԴՊԵՏՅ<br>ԻՇԵԼԱՂԱՉՄ

ԶԳՐԻԳՈՐԷՍ ՎԱՐԴՊԵՏ<br>ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ:

Գիտելիք. *Մինասը Հաղարծնի վանքի հոյակերտ Սեղանատունը կառուցող ճարտարապետ-վարպետն է։ Նրա անվան սկզբնատառը՝ Մ, տարբեր դիրքերով բազմիցս փորագրված է հուշարձանի որմերին։ Բանասիրությանը վաղուց հայտնի էր, որ Սեղանատան շենքը կառուցվել է վանքի առաջնորդ Յովաննես Արմանեցու ջանքերով և Մինաս ճարտարապետի ձեռքով, մոտ 1248 թ.։ Սակայն սույն պրակում զետեղված №№ 114, 116 նոր հիշատակագրությունները ստիպում են մտածել, որ այս հուշարձանի կամ վանական կենտրոնի մյուս կառուցվածքների կերտմանը մասնակցություն են ունեցել նաև* Մուսէս-ը *և հավանաբար* Գրիգորէս վարդպետը: *Հայ վիմագրության դիվանի Ս. Բարխուդարյանը պարզել է, որ վիմագրերում փորագրված* վարդպետ *բառը չպետք է հասկանալ* հոգևորական վարդապետ *իմաստով, այլ իբրև* ճարտարապետ, վարպետ, քարգործ, *որ կարող էր առաջանալ նույն՝* վարդապետ, ուսուցիչ *բառից՝ իմաստի նեղացումով։ Լավագույն օրինակ է Սիսիանի շրջանի Բնունիս գյուղի որմնափակ խաչքարի մոտ ընկած բեկորի արձանագրությունը՝* զԳրիգորիկ քաջ վարդպետ յիշեցէք[1], *որ աներկբայորեն մատնացույց է անում Բնունիսի հուշարձանը կերտող* Գրիգորիկ *ճարտարապետին։*

*Եթե №114 արձանագրության* Մուսէս-ը *կարող է նաև որևէ նվիրատու կամ վանքի միաբան լինել, ապա 116 հիշատակագրության* Գրիգորէս վարդպետը *անտարակույս Սեղանատան* ճարտարապետ-վարպետն է, կառուցողը:

*Թե* Մինասը *ու* Գրիգորէսը *ինչ աշխատանքներ են կատարել Սեղանատան շինարարության ընթացքում, դժվար է ասել, բայց որ երկուսն էլ մասնակցել են Հաղարծնի հուշարձանների կառուցմանը, ակնհայտ է հենց քննվող արձանագրություններից։*

[1] Ս. Բարխուդարյան, *Դիվան հայ վիմագրության, պրակ Բ, Երևան, 1960, էջ 117։*

117. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ. *արտաքուստ, հարավային մուտքի կամարի վրա և շրջանակին,* 2 *տող.*



Ի ԹՎ[ԻՆ] ՈՂԷ (1248), ՅԱՌԱՋ-
ՆՈՐԴՈՒԹԵ⌈ԱՆ⌉ ՅՈՎԱՆՆԻՍԻ
ՎԱՐԴԱՊԵՏԻ, [Ի] ՇԻՆՈՒԹԵ⌈ԱՆ⌉
ԱՄՍՏՈՒԱԾԱՇԷՆ ՏԱՆՍ, ԵՒ ԵՍ՝
ԿՈՒՏԱ⌈Ս⌉՝ ԱՐԱՐՈՂ ՍՆՈՒՆԴ
ՍՐԲՈՑՍ ԵՏՈՒ ԱՒԳՆՈՒԹԻ⌈Ւ⌉Ն[Ս]
ՏՐԱՊԻՍԶԻՍ: ԴԵԿԱՆ, ՎԱՐԴԱ-
ՊԵՏՔՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱ-
ՑԱՆ Ի Տ⌈ԱՐ⌉ՒՆԻ ՍԲ ԲԱՐՍՂԻ .Բ.
ԱՒՐ ՊԱՏ⌈ԱՐԱԳ⌉: ՈՎ ԽԱՓԱՆԷ,
ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏՐ Է:

*Հրատ. Ջալալյանց, Ա. 136, Բարխուդարյանց, 369, Տեր-Մովսիսյան, 78, ՎՏ, 92, Եղիազարյան, 1954, ժ, 40։*

Լուսանկ. 26

Դիտելիք. *Այս կարևոր բնագիրը հրատարակվել է քանիցս, սակայն ցարդ ստուգապես որոշված չէ և մի քանի կետերում մնում է կասկածելի։ Նախ նվիրագրի հեղինակի մասին. ընդօրինակողների մեծ մասն այստեղ կարդացել է.* ԽՍ՝ կուտակիչ եւ արարող սնունդ սրբոցս, *ըստ որում վերականգնելով բնագրում չեղած բազմաթիվ գրեր: Քարի վրա պարզ երևում է* ԽՍ՝ Կուտաս *և մի քանի տառատեղ ընդմիջումից հետո՝* արարող սնունդ *և այլն։ Հարկ է նշել, որ* Կուտաս *գրերից հետո ազատ մնացած տեղում գրեր չկան և չեն եղել, քանի որ այդ մասը քարի բնական փոսիկներ են, որոնք այդպես եղել են արձանագրությունը փորագրելիս։ Մեր վերծանության մեջ կասկածելի է միայն* Կուտա *շարքի վերջին գիրը, որի ներքևի կիսակլոր մասն է միայն երևում. այդ մասում կարելի է վերականգնել* Ն, Տ, Ս, Ե, *գրերից որևէ մեկը։ Ավելի հարմար է* Ս*-ն, քանի որ մյուսները չեն համարվում։ Այսպիսով, բնագրում* կուտակիչ *բառը չի կարդացվում և դրա փոխարեն անհրաժեշտ է վերծանել նվիրագրի հեղինակի անունը՝* Կուտաս *կամ* Կուտան:

2*-րդ տողի սկզբում* տրապիսզիս *բառը բոլոր ընդօրինակողները վերծանել են* տրապիզիս, *չնկատելով առաջին* Ս*-ի ձախ սյունի վրա կցված* ի*-ի գլխիկը։* Տրապիզ *կամ* տրապեզ *բառը փոխառություն է հուն.* Τράπεζα-սեղան *ձևից։*

*Նույն տողում* դեկան *ծագում է հուն.* δεκανίων-տասնապետ *բառից, այստեղ ունի* ճգնոր առաջնորդի, վանահոր *նշանակություն*[1]*։*

*Հողարծնի վիմագրության մեջ վկայված* դեկան, տրապիզ, քոր *բառերը նկատի ունենալով Հ. Օրբելին գտնում է, որ վանքը միջին դարերում հետևել է քաղկեդոնականության*[2]*։*

[1] Հր. Աճառյան, *Արմատական բառարան, Բ, էջ 481, Զ. էջ 999,*

[2] *Տե՛ս Հ.* Օրբելի. *Դիվան հայ վիմագրության, պրակ Ա, Երևան, 1963, էջ* IX։

118. ԳԱՎԻԹ. հարավային պատի տակ, արքայական դամբարան, հյուսիսային տապանաքարի վրա, 1 տող.



Ս[Մ]ԲԲ[Ա]Տ Թ[ԱԳ]Ա[Ւ]ՈՐ

119. ԳԱՎԻԹ, հարավային պատի տակ, արքայական դամբարան, մեջտեղի տապանաքարի վրա, 2 տող.

[Ա]ՅՍ[Ի] Է ՀԱՆԳՍ[Տ]ԱՐԱՆ[Ք]
Թ[ԱԳ]ԱՒՈՐԱՑ . . Գ . . .

120. ԳԱՎԻԹ. ներքուստ, խաչքարի բեկորի վրա, 1 տող.



ՅԻՇԵԱ. ՔՍ ԱԾ ԶԱՐՄԻՆՏԱՐԱ

121. ԳԱՎԻԹ. արտաքուստ, հարավային պատի տակ ընկած առանձին բեկորի վրա, 8 տող.



[ԵՍ] ՄԱՐԵՄՏԻԿԻՆ | ԶԻՄ ՀՈԳՈՅ ԱՐ
[Գ]ՈՒԻՆՍ ՅԵԿԵՂ[ԵՑ]ԻՍ ՏՎ[Ի] . .
. . . : ԵՒ [Մ]ԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ
Ի[Ն]Ձ[Ի] . . . . . . . . . [Ի] ՏԱՐՆԻ .
. . . . . . . . . :

122. ԳԱՎԻԹ. ներքուստ, արևմտյան պատի տակ ընկած բեկորի վրա, 7 տող.



. . . ԱԼ| ԱՅԳԻՆ ԵՒ ԵՏՈՒ Ի ՄԲ
. . . |ԱԿԷՆ ԶԱՄԷՆ . . . : [ՈՎ]
[Զ]ԱՅԳԻՆ ՅԵԿԵՂ|ԵՑՈՅՍ ՀԱՆ|Է, ՅՈՒ-
ԴԱՒ Մ|ԱՍՆԱԿԻՑ Է։

Դիտողություն. Կիսակլոր բարավորի քարը մեջտեղից կոտրվել է և բնագիրը աջակողմյան մասի վրա է, ձախ կողմինը անհետացել է։ Անհայտ նվիրատուն վանքին է նվիրել այգին և դրա դիմաց պատարագամասնը ստացել։

123. ՄԱՏՈՒՌ. 10 մ. արևելք ընկած ճակատակալ կիսակլոր քարի վրա, արձանագրության բեկոր, 2 տողով.




ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ ԳԷ . . . |ՈՑ ՄԵՐՈՑ
ՅԱՒԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ . . . . .

Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 36։

Դիտելիք. Կիսակլոր ավազաքարե բարավորի ձախակողմյան հատվածի գրերն են մնացել, աջ մասը անհետացել է։ Այս բնագրի միակ հրատարակող Հ. Եղիազարյանը պահպանված գրերով վերստեղծել է մի ամբողջական արձանագրություն. կամաւն այ ես Գէորգ կանգնեցի չխաչս վասն փրկութեան հոգւոց մերոց յառաջ..., մոռանալով, որ բեկորը խաչքարի մաս չէ, այլ մատուռի ճակատակալի, և խաչ կանգնեցնելու մասին այստեղ խոսք չէր կարող լինել։

124. ՄԱՏՈՒՌ. մուտքից հյուսիս կանգնած խաչքարի պատվանդանի վրա, 9 տող.




ՈՒԿԷ թՎԻՆ (1218), ԵՍ ԳՐԻԳՈՐ ԿԱԳՆ|ԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՎԵՐԱ ԳԵՐԵ|ԶՄԱՆԻ ԵՂԲԱՒՐ ԻՄ ՆԵ|ՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՒ։ ԼԻ ԱՄԵՆԱՅՆ| ԻՄԱՍ-ՏՈՒԹԵԱՄԲ, ՏԱՐԱԺԱՄ Ի ՔՍ Փ|ՈԽԵՑԱՒ ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԷԹՈՂ Ի|ՆՁ ԵՒ ՏԵՍՈՂԱՑ ԶՆԱ։ ԱՂԱ|ՉԵՄ, ՅԻՇԵԼ ԶՄԵԶ| Ի ՔՍ։

Հրատ. Եղիազարյան, 1954, ԺԱ, 36։

Դիտելիք. Չնայած բավարար պահպանությանը, խաչքարի արձանագրությունը հրատարակվել է զգալի աղավաղումներով։ 1—2-րդ տողերում կանգնեցի բայաձևը առաջին Ն-ի անկումով հաճախ է հանդիպում XII—XIV դարերի վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում, որն, անշուշտ, առաջանում է ժամանակի խոսակցական լեզվի ազդեցությամբ։ Եղիազարյանը բայաձևը արտագրել է կանոնավոր՝ կանգնեցի: Ներսես քահանայի, հրատարակված է Ներսես քահանաիս, լի ամենայն իմաստութեամբ-ը՝ ի ամենայն իմաստութեամբ, տարաժամ ի Քս փոխեցաւ-ը՝ տարաժամ ի կենաց ուխտիցս, եւ սուգ մեծ եթող ինձ-ը՝ և սուգ մեծ եթող ի..., աղաչեմ յիշել զմեզ ի Քս.-ը՝ աղաչանաց... զմեզ և այլն։

125. ՄԱՏՈՒՌ. խաչքարի աջ կողին, 16 տող.



Ի ԹՎԻՆ| ՈԿԸ| (1219), ՅԱՒԱ|ՋՆՈՐԴ|ՈՒԹԵԱՆ Դ|ԱՆԻԵԼԱ|, ԵՍ ՀԱՋ|ԱՐՇԱՀ| ԵՒ ԻՄ| ԱՂԲԵՐ| ՍՄԲԱ|Տ ԿԱՆԳ|ՆԵՑԱՔ| ԶԽԱՉ|Ս Ի ՀԱՆԳՐՍՏԱՐ|ԱՆԻ ՄԱՒ|Ր Ի ՀՈԳՒՈ|

ՓՐԿՈՒԹ[ԵԱՆ]։ ՅԻՇԵՑ|ԵՔ Ի ՍԲ| ՅԱՂԱ|ԹՍ ՁԵՐ| ԵՒ ԶՀՈԳԵ|ՒՈՐ ԵՂԲԱՅՐՆ| ՈՒՐ ԶԳ|ՐԻԳՈՐ ԵՒ| ԱԾ ԶՁԵԶ| ՅԻՇԷ։

Հրատ. *Եղիազարյան, 1954, ԺԱ, 36։*

Դիտոհլիք. *5—6-րդ շարքերում* Դանիելա *Եղիազարյանը կարդացել է* Անիևս. *12—18-րդ, տողերում* ի հանգրստարանի մաւր՝ ի հանգըստարանիս մեր, վճոգեւոր եղբայրն ուր՝ զԳրիգոր-ը զընդու եւ որ եղբայրն ուր զԳրիգոր, *իսկ* եւ ած զձեզ յիշէ-ն *զանց է առել։*

*10-րդ տողում* ագրեր *արտացոլված է բաղաձայնի* ե>ա *և* այ>ե *հնչյունափոխություն, որ կարող էր ներթափանցել ժամանակի խոսվածքներից։*

*25—27-րդ տողերում* եղբայրն ուր *կապակցության մեջ վկայված է* իւ *երկբարբառի պարզում ու ձայնավորի՝* իւր>ուր, *որ նույնպես գալիս է տեղական բարբառներից։*

***126. ՄԱՏՈՒՌ.*** *Նախորդից հյուսիս, մեծ խաչքարի թևերի արանքում, 1 տող.*

.:. ԶՎԻՍԶԽԱ.:. Ի[ՎԻՆ] ԹՎ[ԻՆ] ՉԽԱ. (1292)

***126ա. ԳԱՎԻԹ.*** *Ներքուստ, հյուսիս-արևելյան խորշի մեջ, խիստ քայքայված, 8 տող.*

-ՔԵՑԱԳԻՐՍ
ՍՎԱԴԱՊԵՏԻՍԽԱՉԱՏՐԵՒ
ԱՅԿՆՔԵՑԱՀԱՍՏԱՏՈՒՆ-ԲԻՉԻ
ՈԼՈՒՍԱՒՈՐՉԻՍՈՐՋ---ԱՅՆՏԱՐԻՄԳՐ
-Ը ԱԲ ԱԹԱՔ:Բ:ԺԱԱ ՍԻԱՌՆԵՆԶԺԱՆ
ՍԱԻ
ԱՅՆԱՌԱՋՆՈՐԴՈՐԼԻՆԻՄԻՐՇԽԵՍՑԷԽԱՓԱՆԵԼ--ԱՋՆ
--ԱԽՀԷՆԶՈՎՍԸՆԿԱԼՑԻ -ԺԵՒՀ
------ ԱՊԵՏԱ-Ն

[Ն]ՈՐՈ[Գ]ՔԵՑԱԻ ԴԻՐՍ| ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ԽԱՉԱՏՐ[Ո], ԵՒ| ԱՑ ԿՆՔԵՑԱԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ․ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՍ, ՈՐ Զ[Ա]ՄԵՆ[ԱՅ]ԱՑՆ ՏԱՐԻ ՍԲ ԳՐ|[Ի]ԳՈՐԻՍ[Ի] ՇԱԲԱԹ ԱԻՐՆ ։Բ։ ԺԱՄ ՍԻՍԱԻՆ ԱՌՆԵՆ ԶԺԱՄՆ ԱՑ։ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՐ ԼԻՆԻ, ՄԻ ԻՇԽԵՍՑԷ ԽԱՓԱՆԵԼ․ ․ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ․ ․ ՆԶՈՎՍ ԸՆԿԱԼՑԻ Ի [Ց]Ժ ԵՒ Ը| [Հ]ԱՅՐ[Ա]ՊԵՏԱ[Ց]Ն։